ՏԱՍԱՆՈՐԴ ԵՎ ՀՈՒՍԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ձեր ֆինանսական բարգավաճման հիմքը

ՌԻԿ ՌԵՆՆԵՐ

ՏԱՍԱՆՈՐԴ ԵՎ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ձեր ֆինանսական բարգավաճման հիմքը

ՌԻԿ ՌԵՆՆԵՐ
ՏԱՍԱՆՈՐԴ ԵՎ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Աստվածաշնչյան մեջբերումներն արված են
Աստվածաշունչ մատյան արևելահայերեն
Արարատ թարգմանությունից (1896):

ՏԱՍԱՆՈՐԴ ԵՎ ԶՈՀԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ձեր ֆինանսական բարգավաճման հիմքը

Աստծո Խոսքում կան հրահանգներ այն մասին, թե ինչպես օրհնված լինել և ինչպես բարգավաճել կյանքում: Ո՞վ չի ցանկանում օրհնություններ ստանալ: Որքա՞ն օրհնություններ եք ցանկանում ստանալ: Ես ուզում եմ վերցնել ամենը, ինչ Աստված ցանկանում է տալ ինձ: Նա ցանկանում է, որ մենք օրհնված լինենք: Նա կանչել է մեզ աշխարհով մեկ Ավետարանը քարոզելու: Բայց դա կատարելու համար մեզ փող է հարկավոր: Անհնար է ինչ-որ բան անել առանց փողի:

Միգուցե ասեք. «Բայց փողը դեռ ամեն ինչ չէ»: Անկասկած՝ փողն ամեն ինչ չէ, բայց այն օգնում է մեզ ապրել: Աբրահամը երկրի վրա ապրող ամենահարուստ մարդն էր: Այդ Աստծո մարդը հարուստ էր և բացահայտ խոստովանում էր, որ Աստծո ձեռքն էր հարստացրել իրեն: Այդ իսկ պատճառով, ես ցանկանում եմ խոսել ձեզ հետ փողի մասին:

Աստված ցանկանում է, որ դուք փող ունենաք: Աստված ցանկանում է այնքան հարուստ դարձնել ձեզ, որ կարողանաք օրհնել ուրիշներին: Բայց ինչպե՞ս կարող ենք սովորել ընդունել Աստծո օրհնությունները: Ինչպե՞ս կարող ենք հարստանալ:

Ես մեծացել եմ աղքատ ընտանիքում: Մենք չքավոր

չէինք, բայց երբեք ավել գումարներ չունեինք: Մանկության ընթացքում ինձ համար գրեթե նոր հագուստ չեն գնել: Ես միշտ կրել եմ մյուս երեխաների հագուստները: Մեկ անգամ ինձ համար նոր կոշիկներ գնեցին. դա իմ մանկության ամենավառ հուշերից է: Լավ հիշում եմ, թե ինչպես մայրիկս խանութ տարավ ինձ: Այդ կոշիկները սև էին: Դրանք, միգուցե, ամենագեղեցիկ կոշիկներն էին, որ երբևէ ունեցել էի: Այդ պատճառով, ես պարզապես պայթում էի հպարտությունից, և երբ եկեղեցի էի գնում, ամեն հինգ րոպեն սրբելով փայլեցնում էի կոշիկներս: Եվ այնքան հաճախ էի անում դա, որ երգչախմբից մի մարդ չզսպեց իրեն և դիտողություն արեց: Բայց ես չափազանց ուրախ էի այդ կոշիկների համար, որովհետև ինձ համար այնքան էլ հաճախ կոշիկ չէին գնում:

Փողի պակասության պատճառով ես ընկերներ չունեի: Երբ երեխաները պատրաստվում էին ինչ-որ տեղ գնալ զվարճանալու, նրանց ծնողները միշտ տասը դոլար էին տալիս նրանց գրպանի ծախսերի համար: Ինձ համար դա հսկայական գումար էր: Հայրս հիսուն ցենտ էր տալիս ինձ և ասում. «Որդի՛ս, ավելին չեմ կարող տալ»: Այդ գումարով ես չէի կարող մասնակցել ընդհանուր զվարճանքին: Այդ էր պատճառը, որ ես միայնակ էի մեծանում և միշտ երազում էի իսկական ընկեր ունենալ:

Ծնողներս հրաշալի մարդիկ են, բայց փողի պակասության պատճառով մեր տանը հաճախ վեճեր էին լինում: Իմ մեծ քույրը դպրոց էր գնում, և նրան մշտապես փող էր անհրաժեշտ դասագրքերի, էքսկուրսիաների և շատ այլ բաների համար: Եվ եթե նրան փող էին տալիս, ապա մյուսները մնում էին առանց փողի: Մեր տու-

նը միշտ լի էր սիրով, բայց երբեք՝ առատությամբ:

Ամեն շաբաթ երգչախմբի փորձի ժամանակ մեր հովիվը տասը ցենտ էր տալիս ինձ, որ կարողանայի կոկա-կոլա գնել: Իրականում նա պարզապես ցանկանում էր, որ ես գնայի և չխանգարեի փորձը, բայց ինձ համար այդ տասը ցենտը մի ամբողջ հարստություն էր:

Մայրս աշխատում էր, և ես ստիպված էի տան գործերով զբաղվել. հավաքում էի տունը, մաքրում էի բակը, ճաշ էի պատրաստում և լվանում ափսեները:

Քոլեջում սովորելու համար ես ստիպված էի վարկ վերցնել բանկից: Դրա համար և՛ սովորում էի, և՛ աշխատում: Ես միշտ փողի կարիք ունեի: Բայց խնդիրն այն չէր, որ աշխատել չգիտեի, այլ այն, որ չգիտեի ինչպես վարվել փողի հետ: Իմ ծնողները չէին սովորեցրել ճիշտ վարվել փողի հետ: Երեխաներին փող տալուց նրանց ծնողները բացատրում էին, թե ինչի վրա է պետք ծախսել այն, իսկ ինչի վրա՝ ոչ: Այդ իսկ պատճառով նրանք գիտեին, թե ինչպես օգտվեին փողից, իսկ ես ոչինչ չգիտեի այդ մասին:

Ցանկանում եմ մի օրինակ բերել ֆինանսների հարցում իմ բացարձակ անհիրազեկության մասին: 1888թ.-ին ծնված տատիկս նվիրել էր ինձ հենց այդ թվականին թողարկված յոթ արծաթյա դոլար: Յուրաքանչյուրն արժեր մոտավորապես հարյուր դոլար, բայց ես նույնիսկ գաղափար չունեի դրանց արժեքի մասին: Այդ պահին ինձ յոթ դոլար էր անհրաժեշտ հեռախոսավարձը մուծելու համար, և ես վճարեցի այդ յոթ արծաթե դոլարով:

Տեսնո՞ւմ եք, թե որքան անիրազեկ էի ես ֆինանսական հարցերում: Ընդհանրապես ճիշտ պատկերացում չունեի փողի մասին և չգիտեի, թե ինչպես պետք է բյուջե կազմել: Այդ էր պատճառը, որ ես մշտապես փողի կարիք ունեի:

Չնայած որ իմ ծնողները հրաշալի մարդիկ էին, նրանք, այնուամենայնիվ, աղքատության մտածելակերպ էին փոխանցել ինձ: Իսկ այն, ինչ դուք փոխանցում եք ձեր երեխաներին, իրականություն է դառնում նրանց կյանքում: Այդ իսկ պատճառով, ես մտածում էի ծնողներիս նման և ապրում էի նույն կերպով: Ես մտածում էի, որ իմ կյանքը մշտապես կլինի այնպիսին, ինչպիսին նրանց կյանքն էր:

Երբ ես և Դենիզն ամուսնացանք, մեր շաբաթական եկամուտը հիսուն դոլար էր: Միացյալ Նահանգների չափանիշներով մենք չքավորության մակարդակում էինք: Մեքենա չունեինք, գրեթե ամեն ամիս մեր գազն ու էլեկտրականությունն անջատում էին: Բայց ես այնքան անպատասխանատու էի ֆինանսական հարցերում, որ երբ ինձ մոտ փող էր հայտնվում, մենք գնում էինք լավ ռեստորան և ամբողջությամբ ծախսում էինք՝ փոխարենը վճարեինք կենցաղային վարձերը: Այլ խոսքով՝ քանի որ չէի կարողանում ճիշտ վարվել փողի հետ, ես պարզապես քամուն էի տալիս այն:

Երբեմն մարդիկ ասում են. «Հարուստ լինելը լավ չէ: Հարուստներն օր ու գիշեր մտածում են իրենց փողի մասին»: Բայց կարծում եմ, որ աղքատ լինելն ավելի վատ է: Ո՞վ է, ըստ ձեզ, ավելի շատ մտածում փողի մասին.

իհարկե՝ աղքատը, որովհետև հարուստ մարդիկ օրվա ապրուստի մասին հոգալու կարիք չունեն: Նրանք պարզապես մտածում են, թե ուրիշ որտեղ կարելի է ներդնել իրենց գումարները: Հենց աղքատ մարդիկ են ծառայում փողին, որովհետև նրանք անդադար մտածում են դրա մասին: Իսկ Աստված ցանկանում է, որ ոչ թե դուք ծառայեք փողին, այլ՝ փողը ծառայի ձեզ:

Քանի որ մենք աղքատ էինք, ես կարծում էի, որ կարող եմ տասանորդ չտալ, չէ՞ որ Աստված հասկանում է իմ դրությունը: Ես մշտապես փորձում էի արդարացնել ինքս ինձ: Մեր տանը միշտ շատ մարդիկ էին հավաքվում Աստվածաշնչյան ուսումնասիրությունների համար: Մենք միշտ ջանում էինք հյուրասիրել նրանց ինչ-որ համեղ բանով, առաջարկում էինք սուրճ, թեյ, թխվածքեղեն: Եվ դրա համար էլ կարծում էի, որ կարող եմ տասանորդ չտալ, քանի որ վճարում եմ այդ հյուրասիրության համար: Բայց այն գումարը, որը դուք ծախսում եք հյուրասիրության, ձեր մեքենայով մարդկանց ինչ-որ տեղ տանելու կամ նրանց այլ ծառայություններ մատուցելու համար, տասանորդ չէ: Իսկ Աստված պահանջում է, որ դուք տասանորդ տաք:

Երկար ժամանակ վախենում էի տասանորդ տալուց, որովհետև մենք չափազանց քիչ փող ունեինք: Ես պարզապես չէի կարողանում վստահել Աստծուն ֆինանսական հարցում. ես վստահել էի Նրան իմ փրկությունը. հավատում էի, որ Նա փրկել է ինձ, բայց չէի կարողանում վստահել Նրան իմ գումարները: Դենիզը ցանկանում էր, որ մենք տասանորդ տայինք: Նա ասում էր. «Ռիկ, չէ՞ որ

դու գիտես, որ Աստված կօրհնի մեզ: Չէ՞ որ դու գիտես, թե ինչ է սովորեցնում Աստվածաշունչը. եթե մենք տասանորդ տանք, Աստված կօրհնի մեզ»:

Ես հասկանում էի, որ նա ճիշտ էր, բայց չէի ցանկանում տասանորդ տալ: Ամեն անգամ, երբ Դենիզը հիշեցնում էր ինձ տասանորդի մասին, ես զայրանում էի, ցանկանում էի փախչել նրանից և ասում էի. «Տասանորդն անձնական գործ է, որը վերաբերում է ինձ և Աստծուն: Տերը գիտի, որ ես տալիս եմ»: Իրականում ես ոչինչ չէի տալիս, բայց չէի ցանկանում, որ Դենիզն իմանար այդ մասին:

Ամեն շաբաթ ես քարոզում էի մարդկանց Աստծուն հնազանդվելու անհրաժեշտության մասին: Ես խոսում էի այն մասին, որ եթե նրանք տասանորդ տան, Աստված կօրհնի, բայց ինքս հակառակն էի անում: Մեր ամուսնության առաջին ութ տարվա ընթացքում ես փոքրիկ զոհաբերություններ էի տալիս, բայց ոչ՝ տասանորդ: Եվ մեզ վրա ֆինանսական անեծք եկավ: Մենք փող չունեինք ուտելիքի, բենզինի և շատ այլ բաների համար: Այն տունը, որտեղ ապրում էինք, շատ հին էր: Խոհանոցի խողովակներից մշտապես ջուր էր ծորում: Մենք ջեռուցում չունեինք, և այդ պատճառով խոհանոցում սառցակալած ջրափոսեր էին գոյանում:

Երբ Փոլը ծնվեց, մենք փող չունեինք, որ վճարեինք հիվանդանոցի վարձը և հագուստ ու խաղալիք գնեինք նրա համար. մենք անիծված էինք, քանի որ ես հնազանդ չէի Աստծուն և տասանորդ չէի տալիս: Աստվածաշունչը պարզ ասում է, որ եթե տասանորդ չեք տալիս, դուք

անիծված եք, իսկ եթե տալիս եք, ապա օրհնված եք: Ես խախտեցի այդ հոգևոր օրենքը: Աստվածաշնչում գրված է. «Տվե՛ք, և կտրվի ձեզ»: Սակայն ես չէի տալիս: Ես պատրաստ էի միայն ընդունելու համար: Ես ջանում էի ստանալ, բայց չէի ցանկանում տալ:

Քանի դեռ դուք չեք ընդունել Քրիստոսին և ուխտ չեք կնքել Աստծո հետ, այս հոգևոր օրենքն իշխանություն չունի ձեր կյանքում: Բայց քրիստոնյա դառնալով՝ դուք ուխտ եք կնքում Աստծո հետ: Իսկ Աստծո ընտանիքն իր սեփական օրենքներն ունի: Եթե մենք հնազանդվենք Խոսքին՝ Իր օրենքին, ապա օրհնված կլինենք, իսկ եթե ոչ, ապա անիծված կլինենք:

Երկրորդ Օրինաց գրքի 28.1-13 խոսքերում ասվում է.

«Եվ եթե քո Տեր Աստծո ձայնին ուշադրությամբ լսես, որ զգուշությամբ կատարես Նրա բոլոր պատվիրանները, որոնք Ես այսօր քեզ պատվիրում եմ, քո Տեր Աստված էլ քեզ երկրի բոլոր ազգերից գերազանց կանի: Եվ այս բոլոր օրհնությունները քեզ վրա կգան, քեզ կհասնեն, եթե քո Տեր Աստծո ձայնին լսես: Դու քաղաքի մեջ օրհնյալ և դաշտի մեջ օրհնյալ կլինես: Օրհնյալ կլինի քո որովայնի պտուղը և քո երկրի պտուղը, և քո անասունների պտուղը, կովերիդ ծնունդը և ոչխարներիդ հոտերը: Օրհնյալ կլինի քո կողովը, և քո տաշտը: Դու օրհնյալ կլինես մտնելիս և օրհնյալ կլինես դուրս գալիս: Տերը քո առջև ջարդել կտա քեզ վրա վեր կենող թշնամիներիդ. նրանք քեզ դեմ մեկ ճանապարհով դուրս կգան, բայց քո առջևից յոթ ճանապարհով կփախչեն: Տերն օրհնությունը կուղարկի քեզ քո շտեմարաններում և քո բոլոր ձեռնարկելու բաներում և

քեզ կօրհնի քո Տեր Աստծո՝ քեզ տված երկրում: Ինչպես որ քեզ երդում է արել, եթե քո Տեր Աստծո հրամանները պահես և Նրա ճանապարհներում գնաս, Տերը քեզ Իր համար սուրբ ժողովուրդ կհաստատի, և երկրի բոլոր ժողովուրդները կտեսնեն, որ Տիրոջ անունը կոչված է քեզ վրա, և քեզնից կվախենան: Եվ Տերը քեզ առատություն կտա քո բարության համար՝ քո որովայնի պտուղը, քո անասունների պտուղը և քո երկրի պտուղը շատացնելով այն երկրի վրա, որ Տերը քո հայրերին երդում արեց քեզ տալու համար: Տերն իր բարության գանձը, այսինքն՝ երկինքը քեզ համար կբացի, որ երկրի անձրևը տա ժամանակին, և քո ձեռքի ամեն գործն օրհնի, և դու շատ ազգերի փոխ կտաս, բայց դու փոխ չես առնի: Եվ Տերը գլուխ կանի քեզ, և ոչ թե ագի (պոչ), դու միշտ բարձրում կլինես և ցածրում չես լինի, եթե քո Տեր Աստծո պատվիրաններին լսես»:

Ուշադրություն դարձրեք, որ այս խոստման մեջ Աստված պայման է դնում օրհնություններ ստանալու համար. «Եթե հնազանդվես Ինձ»: Այս խոստումը պատկանում է միայն նրանց, ովքեր պահպանում են ուխտի կանոնները: Գործնականում սա նշանակում է հետևյալը. եթե դուք տասանորդ եք տալիս, օրհնված կլինեք մտնելիս և դուրս գալիս: Եթե դուք տասանորդ եք տալիս, կլինեք գլուխ, այլ ոչ թե պոչ, կլինեք բարձրում, այլ ոչ թե ցածրում: Եթե դուք տասանորդ եք տալիս, հաջողություն կունենաք ձեր բոլոր գործերում, և մարդիկ կտեսնեն, որ դուք օրհնված եք:

Երկրորդ Օրինաց գրքի 28.15-20 խոսքերում գրված է, որ եթե դուք չհնազանդվեք ուխտի օրենքներին,

ապա անիծված կլինեք. «Բայց եթե քո Տեր Աստծո Խոսքին չլսես և չպահես և չանես Նրա բոլոր պատվիրանները և կանոնները, որոնք Ես այսօր քեզ պատվիրում եմ, այն ժամանակ այս բոլոր անեծքները քեզ վրա կգան և քեզ կհասնեն: Անիծյալ կլինես դու քաղաքի մեջ և անիծյալ՝ դաշտի մեջ: Անիծյալ կլինի քո կողովը և քո տաշտը: Անիծյալ՝ քո որովայնի պտուղը և քո երկրի պտուղը, կովերիդ ծնունդը և ոչխարներիդ հոտերը: Անիծյալ կլինես մտած ժամանակդ և անիծյալ՝ դուրս եկած ժամանակդ: Տերն անեծք, տառապանք և հանդիմանություն կուղարկի քեզ համար քո բոլոր ձեռնարկած գործերում, որ անում ես, մինչև որ բնաջինջ լինես… որ Ինձ ձգեցիր (թողեցիր)»:

Այսպիսով, եթե հնազանդ ենք Աստծո Խոսքին, մենք օրհնված ենք, իսկ եթե անհնազանդ ենք Աստծո Խոսքին, ուրեմն անիծված ենք: Աստծուն տասանորդ տալն ուխտի օրենքներից մեկն է:

Աբրահամն առաջին մարդն էր, ով տասանորդ տվեց (տե՛ս Ծնն. 20.14): Բայց եթե կարծում եք, որ տասանորդը միայն հինկտակարանյան օրենքի մասն էր, սխալվում եք: Աբրահամն իր տասանորդը բերեց Աստծուն՝ մինչև Հին ուխտը կնքելը: Ղևտացիների գրքի 27-րդ գլխում խոսվում է այն մասին, որ մենք պետք է տանք Տիրոջը մեր բոլոր եկամուտների տասը տոկոսը: Եթե դուք հողակտոր եք վաճառում, ապա վաճառքից ստացված գումարի տասը տոկոսը պատկանում է Տիրոջը: Եթե դուք ինչ-որ սեփականություն եք վաճառում, օրինակ՝ անասուն, ապա նրա արժեքի տասը տոկոսը պատկանում է Տիրոջը: Եվ եթե տասանորդ չեք տալիս, ապա Աստված ևս հինգ տոկոս է

պահանջում ձեզնից տասանորդի հետ մեկտեղ: Իսկ եթե չեք տալիս տասանորդը և ավելացված հինգ տոկոսը, դուք անեծքի տակ եք լինում:

Երկրորդ Օրինաց 14.26-ում խոսվում է տասանորդ տալու վերաբերմունքի մասին: Այս քայլն անհրաժեշտ է անել հավատքով, նաև անհրաժեշտ է որոշել, թե ինչի համար եք սերմ ցանում: Տասանորդ տալով՝ ես ամեն անգամ հայտնում եմ Աստծուն իմ ցանկության մասին. դուք ունեք դրա իրավունքը՝ որպես ուխտի մասնակից:

Ցանկանում եմ թվարկել տասը հիմնական կետ՝ կապված տասանորդի հետ.

1. Աստծո Խոսքը պատվիրում է տալ տասը տոկոսը ձեր եկամուտից: Եթե ձեր եկամուտը տասը դոլար է, ապա դուք պետք է մեկ դոլար տաք Աստծուն: Այդ դոլարը զոհաբերություն չէ. այն պատկանում է Աստծուն, և դուք պարտավոր եք վերադարձնել: Տասանորդը ձեր պարտավորությունն է կամ պարտքը, իսկ պարտքերը պետք է վճարել:
2. Առաջին բանը, որ պետք է անեք գումար ստանալիս, տասանորդն առանձնացնելն է, և միայն դրանից հետո կարող եք որոշել ձեր անհրաժեշտ ծախսերը: Եթե դուք սկզբում ձեր ծախսերն անեք, ապա ձեր գումարը, միգուցե, չբավականացնի տասանորդի համար, և դուք անիծված կլինեք: Տասանորդը պետք է առաջին տեղում լինի: Դա օրենքի պահանջն է:
3. Զոհաբերությունը այն ամբողջ գումարն է, որ դուք

տալիս եք տասանորդից առանձին: Եթե դուք նվիրատվություններ եք անում և կարծում եք, որ Աստված կօրհնի ձեզ դրա համար, սխալվում եք: Դուք պարզապես փող եք վատնում, քանի որ դուք կարող եք զոհաբերել միայն տասանորդը տալուց հետո: Օրինակ՝ եթե այսօր զոհաբերել եք եկեղեցու շենքի շինարարության համար, բայց տասանորդ չեք տվել, ձեզ շնորհակալություն կհայտնեն, բայց այդ զոհաբերությունն օրհնություն չի բերի ձեր կյանքում: Տասանորդը կազմում է այն գումարի նվազագույն մասը, որ դուք պետք է տաք, իսկ զոհաբերությունները հնարավորություն են տալիս, որպեսզի լրացուցիչ օրհնությունները դրսևորվեն ձեր կյանքում:

4. Ձեր տասանորդը պատկանում է Աստծո տանը: Երբեմն մարդիկ հարցնում են. «Որտե՞ղ պետք է տասանորդ տամ»: Աստվածաշունչը շատ պարզ է խոսում այն մասին, որ տասանորդը պետք է տանել Աստծո տուն. «Ամբողջ տասանորդը տարե՛ք գանձատուն» (Մաղաքիա 3.10): Ո՞րն է այդ գանձատունը: Խոսքն այն տեղի մասին է, որտեղ պահվում է Աստծո Խոսքի հացահատիկը, որտեղ դուք կերակրվում եք Աստծո Խոսքով, և որտեղ բավարարվում են ձեր հոգևոր կարիքները: Խոսքը ձեր եկեղեցու մասին է:

Եթե ինչ-որ մեկը պարբերաբար գումար է ուղարկում մեր ծառայությանը, մենք աշխատում ենք կապ հաստատել այդ մարդու հետ և պարզել, թե ինչ է նա

ուղարկել. զոհաբերությո՞ւն, թե՞ տասանորդ: Դուք կարող եք ուղարկել զոհաբերությունը, բայց չպետք է ուղարկեք տասանորդը, քանի որ ձեր տասանորդը պատկանում է ձեր եկեղեցուն: Այն չի պատկանում մեր ծառայությանը:

Հին ուխտի ժամանակ հավատացյալները բերում էին իրենց տասանորդները ժողովարան, որտեղ նրանք երկրպագում էին Աստծուն: Ժողովարանը նրանց գանձատունն էր:

Ձեր տասանորդը նույնպես պատկանում է ձեր եկեղեցուն: Աստծո աչքերում դուք պատասխանատու եք ձեր եկամուտի տասը տոկոսը հենց ձե՛ր եկեղեցի տանելու համար: Դուք չպետք է անհանգստանաք, թե ինչպես են օգտագործում այդ փողը: Նույնիսկ եթե սխալ են օգտագործում, դուք, միևնույն է, օրհնված կլինեք: Աստված օրհնություններ կբերի ձեր կյանքում, որովհետև դուք հնազանդվեցիք Ուխտի օրենքին, իսկ փողն օգտագործելու վերաբերյալ Նա պատասխանատվության կկանչի ձեր հոգևոր առաջնորդներին: Բայց ես կարծում եմ, որ Աստված տվել է ձեզ այնպիսի հոգևոր առաջնորդներ, որոնց կարող եք վստահել:

5. Եթե դուք հաճախում եք որևէ եկեղեցի, ապա այն ձեր գանձատունն է: Ձեր եկամուտի տասը տոկոսը դուք պետք է այդտեղ տանեք:

6. Աղքատների համար կատարած նվիրատվությունները չեն կազմում ձեր տասանորդի մասը: Եթե եկեղեցի գնալիս ողորմություն եք տալիս մուրացկաններին, իսկ հետո չեք կարողանում ամ-

բողջությամբ տալ ձեր տասանորդը, ապա դուք պետք է հաշվի առնեիք դա մինչև ողորմություն տալը: Տասանորդը պատկանում է Տիրոջը: Սա հոգևոր սկզբունք է: Դուք կարող եք օգնել աղքատներին տասը տոկոսը Աստծուն տալուց հետո միայն: Տալով մուրացկանին այն փողը, որն, ըստ ուխտի, պետք է տայիք Աստծուն, դուք մի փոքր օգնեցիք նրան, բայց Աստվածաշունչն ասում է, որ դրա հետ մեկտեղ խաբեցիք Աստծուն և գողացաք Նրանից:

Միգուցե սա խիստ է հնչում, բայց եթե դուք պատվեք Աստծուն տասանորդով, ձեզ մոտ նույնպես գումար կհայտնվի աղքատներին ողորմություն տալու համար:

7. Տասանորդը միշտ ցույց է տալիս, թե ինչ կա մարդու սրտում: Հիսուսն ասաց Մատթեոսի Ավետարանի 6.21-ում. *«Որտեղ ձեր գանձն է, այնտեղ էլ կլինի ձեր սիրտը»:*

Եթե մարդը չի բերում իր տասանորդն իր եկեղեցի, ապա նշանակում է, որ նրա սիրտը չի պատկանում այդ եկեղեցուն: Եթե նա եկեղեցի չի բերում իր գանձը, ապա կարելի է եզրակացնել, որ նրա սիրտը եկեղեցում չէ: Դուք կարող եք ձեր կյանքի մասին պատմել այն, ինչ ցանկանում եք, բայց ճշմարտությունը բացահայտում է այն փաստը, թե որտեղ եք ներդնում ձեր ֆինանսը: Մարդը մշտապես փողը ծախսում է այն բանի վրա, ինչը թանկ է իր համար: Այդ իսկ պատճառով Հիսուսն ասաց. *«Որտեղ ձեր գանձն է, այնտեղ էլ կլինի ձեր սիրտը»:*

Երբ մարդիկ բողոքում են, որ փող չունեն տասանորդ տալու համար, ապա, սովորաբար, դա նշանակում է հետևյալը. *առաջինը՝* նրանք չեն վստահում Աստծուն ֆինանսական ոլորտում: Նրանք չեն հավատում, որ Աստված կկատարի Իր Խոսքը: *Երկրորդը՝* նրանց կյանքում սխալ են դասավորված առաջնայնությունները: Նրանք չեն ծախսում իրենց փողն անհրաժեշտ բաների վրա, նրանց համար այլ բաներն ավելի կարևոր են թվում, քան տասանորդը:

Եթե դուք փող ունեք նոր քրիստոնեական գիրք կամ լսաժապավեն գնելու համար, եթե ձեզ մոտ փող կա կինոթատրոն գնալու կամ նվագարկիչ գնելու համար, ապա մի՛ ասեք, որ դուք փող չունեք տասանորդի համար: Դուք պետք է ազնիվ լինեք Աստծո հետ: Եթե փող ունեք ցանկացած բանի համար, ապա մի՛ ասեք, որ տասանորդի համար փող չունեք:

8. Տասանորդը հնարավորություն է տալիս, որ ֆինանսական օրհնությունը դրսևորվի ձեր կյանքում:

9. Եթե դուք տասանորդ չեք տալիս, ապա ճանապարհ եք հարթում անեծքի համար:

10. Եթե դուք տասանորդ չեք տալիս, ապա գողանում եք Աստծուց և խաբում եք Նրան:

Մաղաքիա 3.7-9-ում Աստված ասում է.

«Ձեր հայրերի օրերից ի վեր խոտորել եք Իմ պատվերներից և դրանք չեք պահել. ե՛տ դարձեք դեպի Ինձ, և Ես էլ կդառնամ դեպի ձեզ,- ասում է Զորաց

Տերը,- բայց դուք ասում եք՝ ի՞նչ բանում ետ դառնանք: Մի՞թե մարդ Աստծուն կխաբի, որ դուք Ինձ խաբում եք, բայց դուք ասում եք՝ ի՞նչ բանում ենք Քեզ խաբում. տասանորդում և ընծայում: Անեծքով դուք անիծված եք, որովհետև դուք Ինձ խաբում եք ամբողջ ազգդ»:

Երբեմն մարդիկ հարցնում են. «Ինչպե՞ս հաշտվել Աստծո հետ: Ինչպե՞ս վերադառնալ Նրա մոտ»: Եվ Աստված ասում է. «Եկեք սկսենք փողից»: Ցանկանո՞ւմ եք կարգի բերել ձեր հարաբերություններն Աստծո հետ. սկսե՛ք փողից: Եթե Աստծուն փող եք տալիս, ապա ձեր սրտերը նույնպես պատկանում են Նրան, որովհետև սիրտը հետևում է փողին:

Եթե դուք ճիշտ եք վարվում տասանորդի հետ, ապա ձեր սիրտն ուղիղ է Աստծո առջև: Աստվածաշունչը պարզ խոսում է այն մասին, որ եթե մեր սիրտն ուղիղ չէ Աստծո առջև, ապա Աստված չի լսի մեր աղոթքները: Սա նշանակում է, որ եթե դուք անհավատարիմ եք եղել տասանորդի հարցում, ապա Աստծուն օգնության կանչելն անիմաստ է: Աստված կդարձնի Իր երեսը ձեզնից և չի լսի:

Ովսեի մարգարեության 4.6-ում գրված է այն մասին, որ ժողովուրդը բնաջինջ է լինում գիտություն չունենալու պատճառով: Մեզնից շատերն անիծված էին ֆինանսական ոլորտում, որովհետև չգիտեին այս հոգևոր օրենքը: Բայց հիմա դուք գիտեք այն: Այժմ կարող եք ազատվել անեծքից. եկել է գործելո՛ւ ժամանակը: *«Մի՞թե մարդ Աստծուն կխաբի, որ դուք Ինձ խաբում եք, բայց դուք ասում եք՝ ի՞նչ բանում ենք Քեզ խաբում.*

տասանորդում և ընծայում: Անեծքով դուք անիծված եք, որովհետև դուք Ինձ խաբում եք ամբողջ ազգդ» (Մաղաքիա 3.9):

Տեսեք, թե այնուհետև ինչ է խոստանում Աստված. *«Ամբողջ տասանորդը տարե՛ք գանձատուն...»:* Ի՞նչ է տասանորդը: Տասանորդը տասը տոկոսն է: Խոսքը պատվիրում է գանձատուն բերել ոչ թե հինգ տոկոսը, ոչ թե երկու տոկոսը, և ոչ էլ ինը տոկոսը, այլ՝ տասը տոկոսը: *«Ամբողջ տասանորդը տարե՛ք գանձատուն, որ Իմ տանը պաշար լինի, և Ինձ փորձեք սրանով,- ասում է Զորաց Տերը,- թե արդյոք չե՞մ բացի ձեզ համար երկնքի պատուհանները և օրհնություն թափի, մինչև որ դրա համար տեղ չլինի»:* Սա նշանակում է, որ դուք պետք է տաք հավատքով: Միգուցե կարծում եք, որ տալու համար փող չունեք:

Այն բանից հետո, երբ դուք տաք տասանորդը և վճարեք բոլոր հարկերը, և ձեզ մոտ ոչինչ չմնա, միևնույն է, Աստված ասում է. «Բերե՛ք տասներորդ մասը, նույնիսկ եթե ձեզ մոտ այլևս ոչինչ չմնա: Բերե՛ք տասներորդ մասը և փորձե՛ք Ինձ, և Ես ցույց կտամ ձեզ, որ եթե դասեք Ինձ առաջին տեղում, Ես կբացեմ երկնքի պատուհանները և այնքա՜ն առատ օրհնություններ կթափեմ, որ չեք կարողանա ընդունել ամբողջը»:

Մաղաքիայի գրքի 3.11-ում կա խոստում տասանորդ տվող մարդկանց համար. *«Եվ Ես պիտի կշտամբեմ ձեզ համար ուտողին, որ նա չապականի ձեզ համար երկրի արդյունքը, և ձեզ համար անպտուղ չլինի որթը այգում,- ասում է Զորաց Տերը»:* Աստված ասում է.

«Փորձե՛ք Ինձ»: Տասանորդը հեռացնում է անեծքը:

Շատ հաճախ մարդիկ հետաքրքիր հարցեր են տալիս. «Իսկ ի՞նչ, եթե ես նվեր ստանամ ծննդյան առթիվ, կամ, օրինակ, ինչ-որ մեկն ինձ տասը դոլար տա: Արդյո՞ք պետք է տասանորդ տամ դրանից»: Մի՞թե այդ տասը դոլարը եկամուտ է: Անկասկած: Սողոմոնն ասաց. «Քո բոլոր եկամուտների տասը տոկոսը»: Եթե ինչ-որ մեկն անձնական զոհաբերություն է տալիս ինձ կամ ինչ-որ բան է նվիրում, ապա ինձ պատկանում է միայն դրա ինն-սուն տոկոսը, իսկ տասը պատկանում է Տիրոջը:

Սողոմոնը երբևէ ապրող ամենահարուստ մարդն էր: Եվ նա, հավանաբար, ամենաշատ տվող մարդն էր: Գիտե՞ք, թե ինչքան տվեց Սողոմոնը տաճարի շինարարության համար: Եթե նրա տվածը վերածենք ԱՄՆ դոլարների և հաշվի չառնենք այլ մարդկանց զոհաբերությունները, ապա տաճարի շինարարության համար նրա տվածը կկազմի տասը միլիարդ դոլար: Տասը միլիարդ դոլար…

Նրա հարստության համբավը տարածվեց աշխարհով մեկ: Սողոմոնի ժամանակ Երուսաղեմն ամենահարուստ քաղաքն էր: Քաղաքի փողոցները սալարկում էին արծաթով: Նրա կողմից կառուցված տաճարը ճոխ և հիասքանչ էր: Սաբայի թագուհին լսեց Սողոմոնի հարստության մասին և ուղևորվեց Երուսաղեմ, որպեսզի տեսնի այն սեփական աչքերով: Քաղաքից դուրս գալով՝ նա ասաց. «Այստեղ տեսածիս կեսի մասին էլ չէին պատմել ինձ»:

Եվ այդ մարդը, որ ամենահարուստն էր աշխարհում,

ասաց. *«Պատվի՛ր Տիրոջը քո ստացվածքից և քո բոլոր բերքերի երախայրիներից» (Առակաց 3.9):* Այս խոսքը, հավանաբար, Սուրբ գրքի ամենակարևոր հատվածներից է տասանորդի մասին, քանի որ այստեղ ասվում է, թե ինչպիսի վերաբերմունքով մենք պետք է տանք Աստծուն մեր գումարները: Սողոմոնը գիտեր և հասկանում էր, թե ինչպես պետք է տալ Աստծուն: *«Պատվի՛ր Տիրոջը քո ստացվածքից…»:* Այլ խոսքով՝ տալով Տիրոջը մեր ստացվածքից՝ մենք պատվում ենք Նրան:

Ի՞նչ է նշանակում պատվել ինչ-որ մեկին: Առաջինը՝ այդ մարդը ճանաչում ունի ձեր կյանքում: Երկրորդը՝ «պատվել» բառը նշանակում է «առանձնացնել» կամ «արժանացնել հատուկ դիրքի»: Եթե դուք պատվում եք ինչ-որ մեկին, ապա դուք ճանաչում եք, առանձնացնում եք նրան, և նա հատուկ դիրք ունի ձեր կյանքում: Եթե ես պատվում եմ իմ կնոջը, ապա նա հատուկ դիրք է գրավում իմ կյանքում: Եթե ես հարգում եմ իմ աշխատակիցներից որևէ մեկին, ապա կարծես առանձնացնում եմ նրան մյուսներից:

Պատվելով Տիրոջը՝ դուք ճանաչում եք Նրան, այսինքն՝ Նա զբաղեցնում է ամենաբարձր դիրքը ձեր կյանքում: Մեր ունեցվածքը բերելով Տիրոջը՝ դրանով իսկ ասում ենք. «Տե՛ր, ինձ համար Դու ամենից վեր ես: Եվ սրանք պարզապես խոսքեր չեն: Ես հաստատում եմ այդ խոսքերը հստակ գործողություններով. իմ կյանքում Քեզ դասում եմ առաջին տեղում»:

Երբ դուք քիչ փող ունեք, շատ դժվար է տալը: Բայց Աստված բարձր է գնահատում ձեր զոհը, քանի որ

դրանով դուք ցույց եք տալիս, թե որքան եք պատվում Նրան:

Երբ Դավիթն, ի վերջո, գտավ ուխտի տապանակը, նա տեսավ, որ այն տունը, որտեղ տապանակն էր, օրհնված էր: Աստված բնակվում էր այդ տանը: Դավիթը հարցրեց տան տիրոջը. «Որքա՞ն պետք է վճարեմ քեզ, որպեսզի թույլ տաս՝ զոհասեղան կառուցեմ այս վայրում»: Այդ մարդը պատասխանեց, որ ոչինչ չի ցանկանում: Բայց Դավիթն ասաց հետևյալը. «Ես չեմ մատուցի Տիրոջն այնպիսի բան, որ ձրիաբար եմ ստացել: Ես չեմ նվիրաբերի Տիրոջն այնպիսի բան, որ հեշտությամբ եմ ձեռք բերել»:

Դավիթը հասկանում էր, որ իր զոհով պետք է պատվեր Տիրոջը: Նա միայն փող չէր զոհաբերում. նա նույնպես պարում էր Աստծո գահի առջև: Դա նրա զոհի հիմնական մասն էր: Իսրայելի մեծ թագավորը մի կողմ նետեց իր վերնազգեստը և պարեց՝ անցնելով ավելի քան քառասուն կիլոմետր ճանապարհ: Նա չէր ցանկանում տալ Աստծուն այնպիսի բան, որ արժեք չուներ իր համար: Նա պարեց այնքան, մինչև որ լիովին ուժասպառ եղավ:

Եվ ավելի ուշ, երբ ուխտի տապանակը բերեցին Երուսաղեմ և դրեցին վրանում, Դավիթն ամեն առավոտ մտնում էր այդ վրանը և, լինելով Աստծո ներկայության մեջ, փառաբանության և երկրպագության զոհ էր մատուցում: Նա երկրպագում և պարում էր Աստծո առջև՝ մինչև ուժասպառ լինելը:

Ուշագրավ է, որ թեև Դավթի որդի Սողոմոնը շատ

թերություններ ուներ, բայց ժառանգել էր իր հորից ճիշտ վերաբերմունք Աստծո հանդեպ: Նա գիտեր, որ Աստծուն պետք է մատուցել ամենալավը և ամենաարժեքավորը: Հենց այդ պատճառով տաճարի նվիրման օրը Սողոմոնը զոհաբերեց ավելի քան հարյուր հազար անասուն, որոնք իրեն էին պատկանում: Միգուցե հարցնեք. «Ինչո՞ւ այդքան շատ»: Հարյուր հազար անասունը կազմում էր նրա ունեցվածքի զգալի մասը: Հենց այդ պատճառով նա զոհաբերեց հարյուր հազար, այլ ոչ թե տասը հազար անասուն: Նա այնպիսի զոհ մատուցեց, որով ցույց տվեց իր մեծագույն հարգանքը Տիրոջ հանդեպ:

Անհրաժեշտ է, որ Աստծո համար զոհաբերենք միայն լավագույնը: Հին ուխտում հստակորեն ասված է. «Դու չես կարող զոհաբերել այնպիսի ոչխար, որ բծեր կամ թերություններ ունի: Այդ ոչխարի մորթի վրա ոչ մի բիծ չպետք է լինի»: Եվ եթե դու զոհաբերեիր այնպիսի գառան, որի մորթի վրա բծեր լինեին, ապա Տերը կմերժեր այն: Կարևորը քանակը չէ. կարևորը ձեր զոհաբերող սիրտն է, այն վերաբերմունքը, որով տալիս եք Աստծուն տասանորդը և զոհաբերությունները: Այն գումարի չափը, որ դուք տալիս եք Տիրոջը, արտահայտում է ձեր սերը և հարգանքը Նրա հանդեպ: Փոքրիկ զոհը խոսում է այն մասին, որ ձեր սերն Աստծո հանդեպ հասուն չէ: Եթե դուք շատ եք զոհաբերում, ապա դա ցույց է տալիս, որ դուք խորապես սիրում և պատվում եք Աստծուն:

Այսպիսով, տալով տասանորդը՝ դուք հնազանդվում եք Աստծուն, քանի որ տասանորդը պատկանում է ոչ թե ձեզ, այլ Նրան: Եվ Տերն, անկասկած, կօրհնի ձեզ

և կարգելի թշնամուն դիպչել ձեր գումարներին: Բայց դուք ճշմարտապես պատվում եք Աստծուն միայն զոհաբերության միջոցով, այսինքն՝ այն բանի միջոցով, որ դուք տալիս եք տասանորդից առանձին: Աստծո համար նույնպես կարևոր է, թե ինչ վերաբերմունքով եք անում դա:

Սուրբ գրքում գրված է. *«Պատվի՛ր Տիրոջը քո ստացվածքից և քո բոլոր բերքերի երախայրիներից»* (Առակաց 3.9): Իսրայելի ժողովրդի համար դա նշանակում էր, որ անհրաժեշտ է տալ Աստծուն ամբողջ ունեցվածքի տասը տոկոսը. մրգերի, բանջարեղենի, կենդանիների և նույնպես հողատարածքի արժեքի և գումարային եկամտի տասը տոկոսը: Եվ այն, ինչ նրանք տալիս էին Աստծուն, պետք է լիներ լավագույնը. ամենալավ կենդանիները, ամենալավ մրգերը և այլն: Աստված նրանցից պահանջում էր լավագույնը: Այստեղ կարևոր է սրտի դիրքը:

Աստված փնտրում է այնպիսի սիրտ, որը ցանկանում է տալ Իրեն ամենալավը, ոչ թե ամենավատը: Աստված փնտրում է այնպիսի մարդկանց, ովքեր այնքան ուժգին են սիրում Իրեն, որ ցանկանում են պատվել իրենց ունեցածի լավագույնով: Հիսուսն ասաց. *«Որտեղ ձեր գանձն է, այնտեղ էլ կլինի ձեր սիրտը»:* Եթե դուք ներդնում եք ձեր գումարը ստերեոհամակարգ գնելու համար և չեք տալիս այն Աստծուն, ապա հստակ կարող եմ ասել, թե որտեղ է ձեր սիրտը: Ձեր սիրտը պատկանում է այդ ստերեոհամակարգին: Եթե ձեր գումարն ամբողջությամբ ներդրել եք մեքենայի մեջ, ապա ձեր սիրտը պատկանում է ձեր մեքենա-

յին: Եթե ներդրել եք ձեր գումարն Աստծո արքայության մեջ, ապա ձեր սիրտը պատկանում է Աստծո արքայությանը: Տեսեք, թե որտեղ է մարդը ներդնում իր գումարը և կիմանաք ամեն ինչ նրա կյանքի մասին:

Կորնթացիներին ուղղված երկրորդ ուղերձում Պողոս առաքյալն ասաց. *«Սա եմ ասում, որ խնայելով սերմողը, խնայելով էլ կհնձի»:* Պողոսն այստեղ խոսում է վերաբերմունքի մասին. *«Սա եմ ասում, որ խնայելով սերմողը, խնայելով էլ կհնձի»:* «Խնայելով» խոսքը նկարագրում է այն մարդուն, ով դողում է նույնիսկ մանրադրամի վրա: Նա տալիս է, բայց ո՛չ հոժարությամբ, և ո՛չ էլ մաքուր սրտով: Նա զգում է, որ պարտավոր է տալ, և դա նրան դուր չի գալիս: Նա տալիս է միայն այն, ինչ պետք է տա, և այլևս ոչինչ: Իսկ Աստված ասում է. *«Խնայելով սերմողը, խնայելով էլ կհնձի»:* Եվ գիտե՞ք, թե ինչպես է գործում Աստված. Աստված նույնպես տալիս է նրան հենց այդքան և ոչ ավելին: Աստված վերաբերվելու է քեզ այնպես, ինչպես դու ես վերաբերվում Նրան. *«Խնայելով սերմողը, խնայելով էլ կհնձի»:*

Բայց ահա գալիս է մի մարդ, ով ասում է. «Աստվա՛ծ իմ, ես սիրում եմ Քեզ: Եվ ցանկանում եմ մեծ հունձք ստանալ: Ես կպատվեմ Քեզ իմ փողով»: Եվ նա առատորեն ցանում է: Աստված նույնպես առատորեն օրհնում է նրան: «…և առատությամբ սերմողը, առատությամբ էլ կհնձի»: Բ Կորնթացիների 9.7-ում Պողոսը խոսում է այն վերաբերմունքի մասին, որ փնտրում է Աստված. *«Ամեն մեկն, ինչպես որ սրտի հոժարություն կա, ոչ թե տրտմությունով կամ հարկադրությունով,*

որովհետև Աստված սիրում է ուրախ տվողին»: Այստեղ գրված է՝ «ամեն մեկը»: Այսինքն՝ խոսքը յուրաքանչյուր վերստին ծնված հավատացյալի մասին է: Որոշ մարդիկ սխալ են հասկանում այս խոսքը: Այստեղ գրված է. *«Ինչպես որ սրտի հոժարություն կա»:* Այս խոսքերի հիման վրա շատերը ենթադրում են, որ մենք՝ քրիստոնյաներս, կարող ենք ինքներս որոշել՝ տա՞լ տասանորդը, թե՞ ոչ: Նրանց թվում է, թե Հին ուխտի ժամանակներում հավատացյալները պարտավոր էին տասանորդ տալ, իսկ այսօր մենք կարող ենք տալ այնքան, որքան մեր սրտում հոժարություն կա: Բայց Պողոսը խոսում է այլ բանի մասին. «Դու պետք է տաս: Եվ եթե տալիս ես, ապա որոշում կայացրու տալ ճիշտ վերաբերմունքով: Դու պետք է տաս տասանորդն անկախ այն բանից, ցանկանում ես անել դա, թե ոչ: Եթե տասանորդ չես տալիս, ապա դու գող ես և անիծված կլինես: Այդ իսկ պատճառով, տո՛ւր տասանորդն այնպիսի վերաբերմունքով, որն օրհնություն կբերի»:

Մեզնից է կախված, թե ինչպես ենք տալիս: Պողոսն ասում է. «Ինքնե՛րդ որոշեք, թե ինչպես եք տալու Աստծուն: Դուք կարող եք տալ տրտմությունով և դժգոհությունով, կամ էլ կարող եք առատաձեռն լինել. *«Որովհետև Աստված սիրում է ուրախ տվողին»:*

«Ուրախ» բառը հունարենում նշանակում է «թրթիռով, ուրախությամբ»: Այն պատկերում է այնպիսի մարդու, ով այնքան է լցված ուրախությամբ, որ չի կարողանում վերահսկել այն և զսպել ծիծաղը: Նա այնքան ուժգին է ծիծաղում, որ չի կարողանում կանգնել: Հենց այսպիսի վերաբերմունք է ակնկալում Աստված: Աստ-

ված փնտրում է ուրախ տվողի: «Տվող» բառը նկարագրում է այնպիսի մարդու, ում կյանքը լիովին նվիրված է տալուն: Նա չի տալիս պարզապես ժամանակ առ ժամանակ. նա տվող է դարձել: Տալը դարձել է նրա կյանքի ոճը, նրա մասնագիտությունը:

Աղոթում եմ, որ ես և Դենիզը տվող մարդիկ լինենք: Եվ գիտե՞ք, ոչինչ այդքան բավականություն չի պատճառում ինձ, քան տալը: Ես սիրում եմ տալ, և Դենիզը՝ նույնպես: Ցանկանում եմ մի փոքրիկ գաղտնիք բացել: Եկեղեցում երբեմն նկատում եմ, որ ինչ-որ մեկը կրում է իմ վերնաշապիկը կամ բաճկոնը: Եվ անմիջապես հասկանում եմ, որ Դենիզը դատարկել է մեր զգեստապահարանը: Նա այնքան է սիրում տալ, որ հաճախ բաժանում է ոչ միայն իր հագուստը, այլ նույնպես՝ իմը: Դա արդեն դարձել է նրա կյանքի ոճը: Աստված սիրում է ուրախ տվողին: Արհեստավարժ տվողը սովորաբար չի հիշում, թե ում ինչ է տվել: Նրա մոտ պարզապես ձևավորվել է ամեն ինչ տալու սովորությունը: Եվ երբ ինչ-որ մեկը մոտենում է նրան և շնորհակալություն հայտնում, նա նույնիսկ չի կարողանում հիշել, թե ինչ է տվել նրան: Դուք պետք է հիշեք միայն տասանորդի մասին, որպեսզի իմանաք՝ արդյո՞ք տվել եք այն, թե՞ ոչ:

Չպետք է մտածել, որ Աստված փորձում է վերցնել մեր փողը: Մի՞թե Նրան հարկավոր է դա: Աստված մեր փողի կարիքը չունի: Այդ դեպքում ինչո՞ւ է Նա ցանկանում, որ մենք տանք Նրան: Որովհետև փողը կապված է մեր սրտի հետ: Եթե մարդը փող է տալիս Աստծուն, նա նույնպես տալիս է իր սիրտը: Աստծուն պետք չեն

մեր գումարները. Նա ցանկանում է ունենալ մեր սիրտը: Աստված փնտրում է հավատարիմ սիրտ և ճիշտ վերաբերմունք: Այն մարդիկ, ովքեր շատ են սիրում Աստծուն, ցանկանում են տալ ավելի շատ, քան կտային իրենց կնոջը կամ ընկերոջը: Նրանք ցանկանում են պատվել Աստծուն՝ տալով լավագույնը և փող ներդնելով Աստծո արքայության մեջ:

Այսպիսով՝ Աստված, նախ և առաջ, նայում է մեր վերաբերմունքին, մեր սրտին: Պողոսն ասաց. *«Որովհետև սա եմ ասում, թե՝ խնայելով սերմողը, խնայելով էլ կինձի, և առատությամբ սերմողը, առատությամբ էլ կինձի» (Բ Կորնթացիների 9.6):*

Հիշե՛ք. Հիսուսը կանգնած էր տաճարում և նայում էր, թե ինչպես էին մարդիկ բերում իրենց գումարները և գցում տաճարի գանձանակը: Նրանք հեշտությամբ տալիս էին, դրանք զոհ չէին նրանց համար, որովհետև նրանք շատ փող ունեին: Բայց հետաքրքիրն այն է, որ հարուստ մարդիկ սովորաբար տասանորդ չեն տալիս: Եվ Աստված տեսնում է դա: Չնայած այն բանին, որ նրանք փող ունեն, նրանք հաճախ անիծված են լինում իրենց կյանքի ինչ-որ բնագավառում: Նրանք անեծքի տակ են, քանի որ տասանորդ չեն տալիս:

Բայց ահա տաճար է մտնում մի ծեր կին: Նա ունի ընդամենը երկու լումա: Այդ կինն աղքատ է, և նրա համար մեծ զոհ է այդ երկու լուման գանձանակի մեջ գցելը: Հիսուսը, հետևելով նրան, ասում է. «Տեսնո՞ւմ եք այս կնոջը: Նա գցեց ավելի շատ, քան մյուսները»: Ինչպե՞ս դա կարող է պատահել: Չէ՞ որ հարուստ մարդիկ

նույնպես զոհաբերեցին մեծ գումարներ: Ինչո՞ւ, այդ դեպքում, Հիսուսն ասաց, որ նա մյուսներից ավելին զոհաբերեց. որովհետև նա զոհաբերեց ճիշտ վերաբերմունքով և ամբողջ սրտով: Աստված նայում է ոչ թե գումարին, որը մենք տալիս ենք, այլ այն վերաբերմունքին, որով մենք տալիս ենք այդ գումարը:

Ես հիշում եմ մանկությունս և իմ ծեր տատիկին: Նա առանց ամուսնու էր մնացել և գրեթե փող չուներ իր ապրուստը հոգալու համար: Հիշում եմ, թե ինչպես էր նա հանում իր դրամապանակը, երբ մենք եկեղեցի էինք գնում: Մյուսները խոշոր թղթադրամներ էին զոհաբերում, իսկ իմ տատիկը հանում էր իր մոտ եղած ամբողջ գումարը, որը բաղկացած էր մանրադրամից, ուշադիր զննում էր այն և տալիս էր այնքան, որքան կարող էր: Նա ճիշտ վերաբերմունքով էր անում դա: Հաճախ, նույնիսկ տալիս էր ավելին, քան կարող էր, և դա մեծ զոհ էր. Աստված չի ցանկանում ստանալ ծեր փողը. Նա ցանկանում է տեսնել, թե ինչպես եք զոհաբերում: Եվ այդ պատճառով ես ցանկանում եմ հարցնել. «Արդյո՞ք այն, ինչ դուք տալիս եք, զոհաբերություն է: Աստված կարո՞ղ է զգալ, որ ծեր զոհից արյան հոտ է գալիս»:

Պողոս առաքյալն ասում է. «Աստված կտա քեզ այնպես, ինչպես դու ես տալիս Նրան»: Եթե դու ժլատ ես, և եթե տալիս ես Աստծուն միայն տասանորդը և ոչ ավելին, ապա քեզ համար դժվար կլինի: Աստված կվերադարձնի քեզ նույն գումարը և ուրիշ ոչինչ: *«Խնայելով սերմողը, խնայելով էլ կհնձի»:* Կարևոր է այն վերաբերմունքը, որով մենք տալիս ենք Աստծուն, որովհետև Աստված կօրհնի

մեզ նույն վերաբերմունքով: «Եվ առատությամբ սերմողը, առատությամբ էլ կինձի»: Աստծո Խոսքն ասում է, որ եթե դուք սիրում եք Աստծուն և առատորեն ցանում եք Աստծո արքայության մեջ, ապա առատորեն կինձեք ձեր ցանքի պտուղները:

Ես և Դենիզը մշտապես անեծքի տակ էինք այն պատճառով, որ ես տասանորդ չէի տալիս: Տարիներ շարունակ ես գողանում էի Աստծուց: Շատ քիչ էի տալիս Նրան: Եվ երբ Աստծո հերթն էր գալիս տալու հարցում, ապա պատկերացրեք, թե ինչպես էր Նա տալիս ինձ. շա՛տ քիչ: *«Խնայելով սերմողը, խնայելով էլ կինձի, և առատությամբ սերմողը, առատությամբ էլ կինձի»:* Աստծո Խոսքը ճշմարիտ է: Եթե հնազանդվեք Աստծո Խոսքին, դա կկործանի ֆինանսական անեծքը ձեր կյանքում:

Ես և Դենիզը սկսեցինք ցանել: Սկզբում մենք տասանորդ էինք տալիս: Հետո սկսեցինք ավելին տալ: Ես ասացի. «Տե՛ր, ցանկանում եմ տվող լինել»: Այսօր ես և Դենիզը տվող մարդիկ ենք: Ինձ համար չկա ավելի մեծ ուրախություն, քան տալը և մարդկանց օգնելը:

Եթե դուք տալիս եք ճիշտ վերաբերմունքով, ապա այս խոստումը ձեզ համար է. *«Բայց Աստված կարող է բոլոր շնորհքներն ավելացնել ձեզանում, որ ամեն բանի մեջ, ամեն ժամանակ, ամեն բավականություն ունենալով՝ ամեն բարի գործի համար ավելանաք (կամ՝ հարստանաք)» (Բ Կորնթացիների 9.8):* Ուշադրություն դարձրեք *«Աստված կարող է»* բառերին: *«Կարող»* բառը հունարեն *«դունամիս»*-ն է: Այն նշա-

նակում է *«զորեղ ուժ, որը նման է դինամիտի ուժին»:* Ներդնելով ձեր գումարներն Աստծո արքայության մեջ՝ դուք հնարավորություն եք տալիս Աստծուն ազատագրել Իր զորությունը ձեր կյանքում:

Երբ դուք զոհաբերություն եք տալիս Աստծուն, պարտադիր չէ իմանալ, թե ինչպես է Աստված օրհնելու ձեզ: Բայց, տալով Նրան, դուք դռներ եք բացում, որպեսզի ազատագրեք այդ հրաշագործ ուժը: Այն փողը, որը դուք տալիս եք, այդ դռան բանալին է: Երբ դուք պտտում եք բանալին և հրում եք դուռը ձեր զոհերով, Աստված ազատագրում է Իր աստվածային գերբնական կարողությունը, Իր ստեղծագործական ուժը, որն անմիջապես գործում է՝ բացելով այն ճանապարհը, որով Նրա օրհնությունները գալու են ձեզ մոտ: Միգուցե չհասկանաք, թե ինչպես է գործում այդ ուժը, բայց դա նույնիսկ պարտադիր չէ. սա Աստծո օրենքն է, և այն գործում է:

Դուք հավատում եք ձգողության օրենքին, թեև չեք տեսնում այն ուժը, որը գործի է դնում այն: Ձգողության օրենքն անդադար գործում է: Նույնը տեղի է ունենում ցանքի և հունձքի օրենքի դեպքում: Երբ գումար եք ներդնում Աստծո արքայության մեջ, այդ օրենքը գործադրվում է, և դուք սկսում եք օրհնություններ ստանալ: Եվ եթե շատ եք տալիս, եթե զոհաբերում եք, և Աստված զգում է արյան հոտը ձեր զոհաբերության մեջ, ապա Նա կավելացնի բոլոր շնորհքները ձեզանում: *«Շնորհք»* բառը տվյալ դեպքում նշանակում է *«ձրի պարգև Աստծուց»:* Այս խոսքն այն մասին է, որ Աստծո շնորհքը առատորեն կլցվի ձեզ վրա:

«Ավելացնել» կամ *«հարստացնել»* բառը հունարենում նշանակում է *«ունենալ ավելին, քան բավական է»:* Այս առանձնահատուկ հունարեն բառը ջրառատ գետ է նկարագրում: Այդ գետում ջուրն այնքան շատ է, որ աստիճանաբար ծածկում է ափերը և ամեն ինչ իր շուրջը: Այդ իսկ պատճառով, երբ Խոսքն ասում է, որ Աստված կարող է բոլոր շնորհքներն ավելացնել ձեզանում, նկատի ունի, որ երբ մենք տալիս ենք Աստծուն ճիշտ վերաբերմունքով, ապա Աստծո օրհնության ջրառատ գետն ուղղորդում ենք մեր կյանքերի մեջ:

Ինչո՞ւ է Աստված ցանկանում տալ մեզ Իր օրհնությունները: Այս խոսքը շարունակվում է այսպես. *«…ամեն բավականություն ունենալով՝ ամեն բարի գործի համար ավելանաք»: «Ավելանաք»* կամ *«հարստանաք»* բառը նույն բառն է, որն օգտագործվում է այս խոսքի սկզբում: Աստված ոչ միայն ցանկանում է տալ ձեզ Իր օրհնությունները, Նա նույնպես ցանկանում է, որ դուք էլ տաք այդ օրհնությունները ձեզ շրջապատող մարդկանց:

Հիշեք, որ դուք անոթ եք, որի միջոցով փոխանցվում է ամեն ինչ: Փողը գալիս և գնում է: Զորությունը գալիս և գնում է: Այդ է պատճառը, որ երբ կառչում եք այդ փողից, այն դադարում է գալ: Բայց քանի դեռ ձեր ձեռքը բաց է, դուք փոխանցող միջոց եք, և Աստված բազմազան նյութական օրհնություններ կհոսեցնի ձեր միջոցով:

Մենք պետք է նմանվենք Աստծուն: Երբ մենք տալիս

ենք, նմանվում ենք Աստծուն: Բ Կորնթացիների 9.9-ում ասվում է. *«Ինչպես գրված է՝ փռեց, աղքատներին տվեց. Նրա արդարությունը մնում է հավիտյան»:* Երբ մենք ազատորեն տալիս ենք, Աստված լցնում է Իր օրհնություններն Իր ժողովրդի վրա մեր միջոցով, այսինքն՝ մենք դառնում ենք Նրա նման: Աստված մշտապես լցնում և բաժանում է Իր շնորհքը:

10-րդ խոսք. *«Բայց Նա, որ սերմ ցանողին սերմ է պարգևում, և հաց՝ կերակուրի համար, Նա կպարգևի և կշատացնի ձեր սերմունքը և կաճեցնի ձեր արդարության պտուղը»:* Ո՞վ գիտի, որ ցանելու համար նախ՝ պետք է սերմեր ունենալ: Եթե հողագործը դաշտ է գնում դատարկ գրպաններով, այսինքն՝ առանց սերմի, ապա նա չի կարողանա ոչինչ ցանել: Պողոս առաքյալն ասում է. «Նա, ով սերմ է տալիս սերմողին, որպեսզի նա կարողանա ցանել դաշտերում, քեզ նույնպես սերմ կտա ցանելու համար»:

Երբ մարդիկ ասում են, որ իրենք սերմ չունեն ցանելու համար, հաճախ նրանք ստում են: Եթե քո ամբողջ ունեցածը մեկ դրամ է, ապա դա կարող է սերմ դառնալ քո ցանքի համար: Մարդկանց մեծ մասը պարզապես դատարկորեն վատնում է փողը, իսկ հետո ասում. «Ես ցանելու ոչինչ չունեմ»: Դուք կարող եք ասել, որ դատարկորեն չեք ծախսում փողը: Բայց մի՞թե այդքան անհրաժեշտ է պաղպաղակ գնել, մի՞թե անհրաժեշտ է կոկա-կոլա գնել: Նրանց մեծ մասը վատնում է փողը մանրուքների վրա. նրանք դեն են նետում իրենց սերմերը: Պատկերացրե՛ք. ի՞նչ կլիներ, եթե հողագործը դեն նետեր իր սերմերը: Եթե նա չցա-

ներ, չէր ունենա հունձք և ապագա:

Աստված ցույց կտա ձեզ, որ դուք սերմեր ունեք: Եթե կարգի բերեք ձեր ֆինանսները, դուք միշտ մի քիչ սերմ կունենաք, որը կարելի կլինի ցանել: Այս խոսքում ասվում է, որ Աստված սերմ է տալիս սերմողին:

Աստված սկսեց հանդիմանել իմ սիրտը, որովհետև երբեմն մենք ուղղակի փող էինք վատնում: Նա ասաց. «Դու ցանկանո՞ւմ ես բարգավաճել ապագայում: Այդ դեպքում մի՛ վատնիր քո սերմը: Քո ապագան ավելի կարևոր է, քան այսօրվա ընթրիքը ռեստորանում: Քո ապագան կոկա-կոլայից ավելի կարևոր է»: Եվ մենք փոխեցինք մեր բյուջեն, որպեսզի սերմ ցանեինք: Եվ չնայած որ սկզբում այնքան շատ չէինք ցանում, դա, միևնույն է, հնարավորություն տվեց Աստծո զորությանը՝ գործել, և մենք սկսեցինք օրհնություններ ստանալ:

Երբ դուք տալիս եք, ձեր արդարության պտուղն ավելանում է (տե՛ս Բ Կորնթ. 9.10): *«Պտուղ»* բառը, որն օգտագործված է այստեղ, նշանակում է *«խաղող»:* Այն նկարագրում է խաղողի քաղցր համը: Երբ դուք տվող եք դառնում, շուտով սկսում եք օրհնություններ ստանալ և զգում եք հաղթանակի քաղցր համը: Այնքա՛ն քաղցր է տեսնել, թե ինչպես է բազմապատկվում ձեր սերմը: Այնքա՛ն հաճելի է ունենալ լավ աշխատանք, տեսնել, թե ինչպես է ավելանում ձեր եկամուտը, ձեր թոշակը, ինչպես են բժշկվում ձեր երեխաները, ինչպես է ձեր տանը թագավորում խաղաղությունը, ձեր սեղանին միշտ սնունդ կա, դուք նոր հագուստ ունեք, ձեր միջոցները միշտ բավական են

մարդկանց օգնելու և եկեղեցու կարիքները հոգալու համար: Ես հավատում եմ, որ նման պահը գալիս է այն մարդու կյանքում, ով տալիս է:

Բայց գոյություն ունեն արդարության այլ պտուղներ: Փիլիպեցիների 4.15-17-ում գրված է. *«Դուք ինքներդ էլ, փիլիպեցիներ՛, գիտեք, որ Ավետարանի սկզբում, երբ որ Մակեդոնիայից դուրս եկա, ոչ մի եկեղեցի հաղորդություն չարեց ինձ տալու կամ առնելու հաշվով, բայց միայն դուք: Քանի որ Թեսաղոնիկեի մեջ էլ մի երկու անգամ ինձ պետք եղած բաները ուղարկեցիք: Իբր ոչ թե տուրքն եմ ուզում, այլ պտուղն եմ ուզում, որ ավելանա ձեր հաշվին»:* Ուշադրություն դարձրեք հետևյալ բառերին. *«…պտուղը…, որ ավելանա ձեր հաշվին»:*

Գոյություն ունի պտղի ևս մեկ տեսակ: Ըստ Պողոս առաքյալի խոսքերի՝ Աստված, որպես հաշվապահ, հաշվում և գրում է այն, ինչ մենք տալիս ենք: Ձեր յուրաքանչյուր նվիրատվությունը գրվում է ձեր հաշվին: Աստված ճշգրտորեն կարող է ասել ձեզ, թե որքան եք դուք զոհաբերել, մինչև վերջին դրամը: Բայց Նա գրի է առնում ոչ միայն այն, ինչ տալիս եք, այլ նաև այն, թե ինչպիսի պտուղ է դա բերում:

Օրինակ՝ եթե ես զոհաբերություն եմ տալիս որևէ միսիոների, Աստված գրում է դա իմ հաշվին: Այդ միսիոները գնում է Աֆրիկա և քարոզում է այնտեղ, և նրա ծառայության շնորհիվ շատ մարդիկ փրկվում են: Ես չեմ կարող ինքս գնալ Աֆրիկա, բայց իմ գումարները կարող են օգնել, որպեսզի մեկ այլ մարդ անի դա: Այդ

մարդու աշխատանքի պտուղը նույնպես գրվում է իմ հաշվին:

Կամ, օրինակ, ես գումար եմ տալիս բժշկության ծառայության համար, և ինչ-որ մեկը գնում և աղոթում է հիվանդների համար: Ես չեմ կարող ինքս գնալ, բայց իմ ֆինանսները կարող են գործել մարդկանց բժշկության համար: Եվ Աստված իմ հաշվին է ավելացնում ոչ միայն այն գումարը, որը ես տվել եմ, այլ նաև այն, թե որքան մարդիկ են բժշկվել այդ գումարի շնորհիվ:

Ամեն անգամ, երբ ինչ-որ մեկը փրկություն կամ բժշկություն է ստանում շնորհիվ այն բանի, որ ես զոհաբերել եմ ինչ-որ ծառայության համար, դա ավելանում է իմ հաշվին:

Երբ մեր եկեղեցին աճում է, երբ նոր եկեղեցական շենք է կառուցվում, երբ մարդիկ գալիս և երկրպագում են Աստծուն, դա ավելանում է իմ հաշվին: Իմ տալը չի սահմանափակվում միայն փողով: Եթե ես զոհաբերել եմ և դրա շնորհիվ ինչ-որ մեկը փրկություն է ստացել, դա ավելանում է իմ հաշվին: Եվ եթե այդ փրկված մարդն ավետարանիչ է դառնում ու մեկ միլիոն մարդ է շահում Քրիստոսի համար, դա նույնպես ավելանում է իմ հաշվին:

Երբ ես գումար եմ հատկացնում եկեղեցու շենքի շինարարության համար և ձեզ հետ միասին երկրպագում եմ Աստծուն այդ շենքում, իմ սիրտը ցնծում է, որովհետև նույնիսկ հարյուր տարի անց իմ մահվանից հետո մարդիկ գալու են այդտեղ և երկրպագելու են Աստծուն: Դա նույնպես կավելանա իմ հաշվին:

Ահա թե ինչու եմ ես սիրում տալ: Չէ՞ որ ամեն անգամ, երբ տալիս եմ, ես ոչ թե կորցնում եմ, այլ ձեռք եմ բերում: Իմ միտքն այն աստիճան է նորոգված Աստծո Խոսքով, որ տալն ինձ համար կորուստ չէ: Ես գիտեմ, որ ամեն անգամ, երբ տալիս եմ, ես ստանում եմ: Ես ցանկանում եմ ստանալ, ստանալ և ստանալ: Ահա թե ինչու եմ տալիս: Նման վերաբերմունք ունենալով՝ դուք ջրառատ գետ եք դառնում և կարող եք տալ ամեն բարի գործի համար:

«Ամեն բանի մեջ հարստացած ամեն լիությունով, որ մեզանով գոհություն է բերում Աստծուն» (Բ Կորնթացիների 9.11): *«Հարստացած»* բառը հունարենում *«պլուսիասն»* է: Այն նկարագրում է անհավատալիորեն հարուստ մարդու: Աստված ցանկանում է հարստացնել մեզ, որպեսզի օրհնություն դառնանք մարդկանց համար: Ինչո՞ւ մենք պետք է օրհնություն լինենք մարդկանց համար. քանի որ, ինչպես ասում է Աստվածաշունչը, այդ ժամանակ մեր շնորհիվ գոհություն է բարձրանում Աստծուն:

Եթե դուք ճիշտ վերաբերմունք ունեք փողի հանդեպ, եթե դուք այնպիսի մարդ եք, ում միջոցով Աստված կարող է փոխանցել Իր օրհնությունները, ապա այդ օրհնությունները կհասնեն թե՛ ձեզ, և թե՛ ձեզ շրջապատող մարդկանց: Եթե մենք տալիս ենք ճիշտ կերպով, ցանկացած կարիք բավարարվում է:

Երբեմն հարց է առաջանում, թե որքան հաճախ պետք է տասանորդ և զոհաբերություն տալ: Պատասխանը Ա Կորնթացիների 16.1-ում է. *«Այն տուրք*

ժողովելու կողմանե, որ սուրբերի համար է, ինչպես Գաղատացիների եկեղեցիներին պատվիրեցի, այնպես էլ դուք արեք»: «Ժողովել» բառը համապատասխանում է հունարեն *«լոգեա»* բառին: Ի՞նչ է նշանակում *«լոգեա»* բառը: Իր կազմությամբ այն նման է հունարեն *«լոգոս»* բառին, որը նշանակում է *«խոսք»:*

Կա սերտ կապ ձեր տալու և ձեր խոսքերի միջև: Երբ ընդունեցիք Քրիստոսին, դուք ասացիք. «Հիսո՛ւսն է Տերը»: Դուք ասացիք դա ձեր շուրթերով: Եվ առաջին ոլորտը, որտեղ դրսևորվում է Հիսուսի իշխանությունը, ֆինանսական ոլորտն է: Աստծուն գումար տալով՝ մենք ցուցադրում ենք, որ Հիսուսն իրականում մեր կյանքի Տերն է: Այն քրիստոնյան, ով չի տալիս Աստծուն, գուցե և կգնա Երկինք, բայց Հիսուսը նրա Տերը չէ:

Ա Կորնթացիների 16.1-ում գրված է. *«Այն տուրք ժողովելու կողմանե, որ սուրբերի համար է, ինչպես Գաղատացիների եկեղեցիներին պատվիրեցի, այնպես էլ դուք արեք»:* «Պատվիրել» բառը նշանակում է *«որոշակի կարգ հաստատել ինչ-որ հարցում»* կամ *«տալ մանրամասն և հստակ հրահանգ»:*

Պողոս առաքյալը պատվիրում էր բոլոր եկեղեցիներին: Նա ամենուր սովորեցնում էր դա: Եվ երբ նա ասում է՝ *«ինչպես Գաղատացիների եկեղեցիներին պատվիրեցի, այնպես էլ դուք արեք»,* նրա խոսքերը հնչում են որպես հրաման, այլ ոչ թե առաջարկ:

Նա շարունակում է. *«Ամեն միաշաբթի օր ձեզնից ամեն մեկը թող իր մոտ հավաքի, ինչ որ կհաջողվի, որ չլինի թե երբ որ գամ, այն ժամանակ ժողովելը լինի»:*

Այս խոսքում Պողոսը պատվիրում է տալ ոչ թե ամեն ամիս, այլ ամեն շաբաթ:

Եթե դուք ստանում եք ձեր աշխատավարձն ամեն ամիս, ապա պետք է բերեք տասանորդն ամսվա առաջին կիրակի օրը: Իսկ եթե դուք աշխատավարձ եք ստանում ամիսը երկու անգամ, ապա պետք է տասանորդ տաք ամիսը երկու անգամ: Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը չի խոսում միայն տասանորդի մասին: Նա խոսում է այն մասին, որ ամեն շաբաթ մենք պետք է ինչ-որ բան տանք նույնիսկ այն բանից հետո, երբ տասանորդ ենք տվել: Եթե Աստված օրհնել է մեզ և շաբաթվա ընթացքում կարողացել ենք ինչ-որ գումար տնտեսել, մենք պետք է զոհաբերենք: Այս խոսքում Պողոս առաքյալը շատ պարզ է խոսում այն մասին, որ մենք պետք է անենք սա ամեն շաբաթ՝ շաբաթվա առաջին օրը:

Ես բացեիբաց եմ խոսում այն պատճառով, որ Պողոսը խոսում էր այս մասին նույն ձևով: Տալու մեջ Պողոսն առատաձեռն էր: Նա ասում է. «*...որ չլինի թե երբ որ գամ, այն ժամանակ ժողովելը լինի»:* Պողոսը չի պատվիրում մեզ փող կուտակել: Նա ասում է. «Երբ ես գամ, դուք չպետք է ոչ մի կուտակած գումար ունենաք»:

Ինչո՞վ կարելի է բացատրել Պողոսի խոսքերը. այն բանով, որ նրա սիրտն արդար էր Աստծո առջև: Իսկ ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքն Աստծո հանդեպ: Դուք գիտեք, որ չփրկված աշխարհը դժոխք է գնալու: Դուք գիտեք, որ կան մարդիկ, ովքեր փրկության

կարիք ունեն, և դուք կարող եք օգնել նրանց: Այդ դեպքում, ինչպե՞ս կարելի է պահել այն, ինչ ունեք: Պողոսը տալիս էր ամեն ինչ: Նա չուներ խնայած գումարներ: Նա տալիս էր ամեն ինչ, որովհետև գիտեր, որ ժամանակը կարճ է: Նա գիտեր, որ այն աշխատանքը, որ Աստված հանձնարարել էր իրեն, պետք է կատարվեր: Եվ նա ասաց. «Երբ ես գամ, թող ձեր բանկային հաշիվները լիքը չլինեն»:

Հակոբոսի ուղերձի 5-րդ գլխում գրված է այնպիսի մարդկանց մասին, ովքեր փող են կուտակում սև օրվա համար: Հակոբոսն ասում է, որ նրանց փողը կժանգոտի, իսկ բարիքները կկործանվեն, որովհետև նրանք վստահում են ոչ թե Աստծուն, այլ իրենց փողին: Երբեմն մարդիկ ասում են. «Բայց ես ցանկանում եմ իմաստուն լինել: Ես պետք է ինչ-որ բան պահեմ սև օրվա համար»: Դուք կարող եք փող կուտակել «սև օրվա» համար, բայց եթե այդ «սև օրը» գա, այն կարող է այնքան սև լինել, որ ձեր բոլոր խնայողությունները չբավականացնեն: Ես չեմ ցանկանում, որ «սև օրը» գա, այդ իսկ պատճառով զոհաբերում եմ իմ գումարները և հավատում եմ, որ «սև օրը» կանցնի իմ կողքով: Եթե սատանան ցանկանա միջամտել իմ գործերի մեջ, Աստված կկանգնի իմ և սատանայի միջև, քանի որ ես փող եմ ներդնում Աստծո արքայության մեջ: Ես նույնիսկ կարիք չեմ ունենա ինչ-որ բան ասել սատանային, քանի որ Աստված ասաց. «Ես կարգելեմ փչացնողին»: Իսկ Աստծո ձայնից ավելի զորավոր ձայն չկա. սա Աստծո խոստումն է:

Խորհուրդ եմ տալիս կարդալ Մարկոսի Ավետարա-

նի 10.17-27 խոսքերը, որտեղ շատ պարզ և հստակ արտահայտվում է Տեր Հիսուսի կարծիքն այն մարդկանց մասին, ովքեր հուսացած են իրենց հարստությանը: Ինչպես ցույց է տալիս այս հատվածը, մարդիկ հարկադրված են ընտրել հարստության և Աստծո արքայության միջև: Եթե հարստությունն իշխանություն ունի մարդու սրտի վրա, նա կարող է զրկվել Աստծո արքայությունից: Մյուս հատվածը, որը վերաբերում է այս հարցին, Ղուկասի Ավետարանում է (12.13-21): 21-րդ խոսքն ասում է, որ փորձանք է սպասվում նրան, ով *«…իր անձի համար գանձ է հավաքում և Աստծով չէ հարուստ»:*

Եթե ձեր ֆինանսները չեք ներդնում Աստծո արքայության մեջ և որոշում եք կայացնում թողնել դրանք ձեզ մոտ, Աստված չի կարող պաշտպանել ձեզ, որովհետև դուք գողանում եք Իրենից: Աստծուց գողացող մարդը չի կարող ֆինանսական բարեկեցություն խնդրել Նրանից: Աստված չի կարող պատասխանել նման աղոթքին, քանի որ իր անհնազանդությամբ մարդն անեծք է բերել իր վրա:

Երբ խոսքը տասանորդի և զոհաբերությունների մասին է, միշտ բազմաթիվ հարցեր են առաջանում: Ես ցանկանում եմ պատասխանել որոշ հարցերի:

«Իմ ամուսինը չի ցանկանում տասանորդ տալ և թույլ չի տալիս ինձ անել դա: Կարո՞ղ եմ թաքուն փող վերցնել նրա աշխատավարձից և տասանորդ տալ»:

Ո՛չ, այդպես չի կարելի վարվել: Ես ինքս տարիներ

շարունակ չէի ցանկանում տասանորդ տալ, չնայած այն բանին, որ Դենիզը պնդում էր դա: Առաջին հերթին՝ երբեք փող մի՛ վերցրեք՝ առանց ամուսնու գիտության և համաձայնության: Եփեսացիների ուղերձի 5-րդ գլխում խոսվում է այն մասին, որ մենք չպետք է ստենք: Եվ եթե ձեր ամուսնուց թաքուն տասանորդ եք տալիս, դուք անազնիվ եք վարվում: Դա միայն կբարդացնի ձեր փոխհարաբերությունները:

Նույն սուրբգրային հատվածում խոսվում է այն մասին, որ չի կարելի գողանալ: Եթե դուք փող եք վերցնում ձեր ամուսնու աշխատավարձից՝ առանց նրա կամքի, և Աստծուն եք տալիս, ապա դուք գողանում եք: Իսկ Աստված երբեք չի օրհնի այդպիսի քայլը:

Այդ դեպքում ինչպե՞ս վարվել: Դուք կարող եք զոհաբերություն տալ այն գումարից, որ նա տալիս է ձեզ տնային ծախսերի համար: Աստված ողորմության Աստված է, և Նա հասկանում է, որ եթե ամուսինը չի թույլատրում ձեզ տասանորդ տալ, դուք ոչինչ չեք կարող անել, բայց կարող եք զոհաբերություններ տալ, և Աստված կօրհնի:

«Պե՞տք է արդյոք տասանորդ տալ, երբ նվեր են տալիս կամ ինչ-որ գումար են օրհնում»:

Այո՛: Առակաց 3.9-ում ասվում է. «Պատվի՛ր Տիրոջը քո ստացվածքից և քո բոլոր բերքերի երախայրիներից»: Այս խոսքը պարզ խոսում է այն մասին, որ մենք պետք է տասանորդ տանք մեր բոլոր ստացվածքներից:

Եթե դուք ծննդյան տոնի առթիվ տասը դոլար եք ստացել, ապա մեկ դոլարը պատկանում է Տիրոջը: Դուք չէիք սպասում, որ կստանայիք այդ գումարը. Աստված ուղարկեց այն ձեզ, այդ իսկ պատճառով, տասը տոկոսը պատկանում է Տիրոջը:

Ստացվածք կարելի է համարել նույնպես բազմաթիվ նվերները, օրինակ՝ ծննդյան օրվա կամ հոբելյանի առթիվ: Դա նույնպես ստացվածք է, որով Աստված օրհնում է մեզ: Եվ եթե ցանկանում ենք, որ օրհնությունների հոսքը չդադարի, ապա ստանալով ինչ-որ բան՝ մենք պետք է կրկին ցանենք տասը տոկոսը:

«Ի՞նչ անել, եթե ինչ-որ մեկն օրհնել է սննդով: Այդ դեպքում, ինչպե՞ս տասանորդ տալ Տիրոջը: Եթե հավ են նվիրել, պե՞տք է արդյոք դրա ինչ-որ մասը թողնել Տիրոջը»:

Իհարկե՝ ո՛չ: Այդպես վարվում էին Հին ուխտի ժամանակներում: Բայց այդ մեթոդը ոչ գործածական է: Մեր ժամանակներում չի հաջողվի սնունդ պահել Տիրոջ համար: Մթերքն արագ փչանում է: Ես առաջարկում եմ վարվել հետևյալ կերպով. հիշե՛ք այն մասին, որ ինչ-որ մեկն օգնել է ձեզ: Եվ հաջորդ անգամ, երբ տեսնեք ինչ-որ մեկին կարիքի մեջ, օգնե՛ք նրան: Դուք կարող եք օրհնել մարդկանց սննդով, ինչպես որ ձեզ օրհնեցին: Եթե ինչ-որ մեկը հիվանդ է, կարող եք այցելել և մթերք տանել նրան: Եթե իրականում ցանկանում եք վերադարձնել այն, ինչ Տերը տվել է ձեզ, արե՛ք դա անձնական հարաբերությունների մակարդակի վրա:

Առակաց 19.17-ում ասվում է. «Աղքատին ողորմողը Տիրոջն է փոխ տալիս...»: Տերը հատկապես ողորմած է աղքատ մարդկանց հանդեպ: Օգնելով աղքատներին՝ դուք ձեռք եք բերում Աստծո հատուկ բարեհաճությունը:

«Կարելի՞ է տալ տասանորդը կարիքավոր մարդկանց, թե՞ անհրաժեշտ է տալ եկեղեցուն, որը կօգտագործի այդ գումարը»:

Առաջին հերթին՝ քո տասանորդը պատկանում է Աստծո տանը՝ տեղական եկեղեցուն: Եթե դու տալիս ես տասանորդը կարիքավորներին, դու գողանում ես Աստծուց: Այդ տասանորդը նախատեսված է Աստծո տան համար: Մաղաքիայի 3-րդ գլխում ասված է. *«Ամբողջ տասանորդը տարե՛ք գանձատուն, որ Իմ տանը պաշար լինի»:* Եթե բոլորը տասանորդ և զոհաբերություններ բերեին, եկեղեցին կկարողանար իրականացնել իր գործունեությունը և մշտապես միջոցներ կունենար աղքատների կարիքները բավարարելու համար: Եթե բոլորն ազնվորեն տասանորդ տային, ապա գումարը կբավականացներ ամեն ինչի համար: Գործք առաքելոց գրքի 6-րդ գլխում խոսվում է սարկավագների ծառայության մասին, որը ստեղծվեց մարդկանց կարիքները բավարարելու համար: Եկեղեցու առաջնորդները հավաքում էին գումարը, և այն օգտագործվում էր աղքատներին անհրաժեշտ սնունդ գնելու համար:

Ուշադրություն դարձրեք, որ Նոր կտակարանում

չկան հիշատակումներ այն մասին, որ եկեղեցին գումար էր բաժանում աղքատներին: Ես համոզված եմ, որ մենք չպետք է փող տանք նրանց: Մենք կարող ենք օգնել նրանց սնունդով, հագուստով, անհրաժեշտ իրերով: Ես կարծում եմ, որ աղքատների կարիքները պետք է հոգա սարկավագների ծառայությունը:

Եվ ահա դրա պատճառը. սարկավագների ծառայության անդամները գիտեն, թե ինչպիսի կարիքներ ունի իրենց եկեղեցին: Նրանք հստակորեն գիտեն, թե ով ինչի կարիք ունի: Որոշ մարդիկ ասում են, որ նրանք կարիքավոր են, սակայն իրականում դա այդպես չէ: Հաճախ նրանք պարզապես փողի հետ վարվել չգիտեն, ինչի արդյունքում ստիպված են փող խնդրել ինչ-որ մեկից ամեն շաբաթ: Նրանք չեն փորձում աշխատանք գտնել կամ փոխել իրենց սովորությունները, այլ ցանկանում են մշտապես օգնություն ստանալ: Եվ սարկավագների ծառայությունը գիտի այդ մասին:

Թույլ տվեք օրինակ բերել: Ամեն կիրակի, ծառայությունից հետո ինձ մոտենում են մարդիկ և խնդրում են, որ ֆինանսապես օգնեմ նրանց: Բայց դա իմ ծառայությունը չէ: Ես չեմ կարող ասել նրանց՝ «այո» կամ «ոչ», այլ ուղարկում եմ ծառայողների մոտ:

Երբեմն ինչ որ մեկը մոտենում է ինձ և ասում. «Ես ծայրահեղ կարիքի մեջ եմ: Ինձ հենց այսօր օգնություն է անհրաժեշտ»: Այդ ժամանակ ես մոտենում եմ ծառայողներին և բացատրում իրավիճակը: Ծառայողներից մեկն ասում է, որ արդեն հինգ անգամ օգնել են այդ մարդուն, բայց նա չի ցանկանում

փոխվել: Ես չգիտեի այդ մասին, բայց ծառայողները գիտեին, քանի որ դա նրանց պարտականությունների մեջ է: Եթե մարդը փող է խնդրում օղի գնելու համար, ապա մենք չպետք է տանք:

Երկրորդը՝ քանի որ ծառայողներն այցելում են մարդկանց, գիտեն, թե ինչպես են նրանք օգտագործում իրենց միջոցները: Շատերը դժվարություններ են կրում ոչ թե փողի պակասության պատճառով, այլ՝ որ սխալ են ծախսում դրանք: Եթե նրանք անտեղի վատնում են իրենց փողը, ապա այդ մարդկանց օգնելով՝ դուք պարզապես ավելի շատ ծախսելու հնարավորություն եք տալիս նրանց: Մեր սարկավագների ծառայությունը ճանաչում է մարդկանց: Նրանք գիտեն եկեղեցու անդամների իրական կարիքները: Նրանք գիտեն, թե տվյալ պահին ով ավելի շատ օգնության կարիք ունի:

Երրորդը՝ կարծում եմ, հիմնվելով Գործք առաքելոց գրքի վրա, կարիքավորին ավելի լավ է սնունդ և հագուստ տալ կամ ցուցաբերել որևէ գործնական օգնություն: Եթե հայտնի դառնա, որ եկեղեցին փող է բաժանում, ապա մարդիկ տարբեր տեղերից կգան այդտեղ: Նրանք չեն գա վերստին ծնվելու, այլ՝ փող ստանալու համար: Իսկ երբ դադարեք փող բաժանել, նրանք կդադարեն հաճախել եկեղեցի: Եթե եկեղեցին փող բաժանի աղքատներին, այն կհայտնվի դժվարին կացության մեջ:

Ես և Դենիզն օգնել ենք շատ մարդկանց: Օրինակ՝ եթե ինչ-որ մեկն ավտովթարի է ենթարկվել, մենք

սիրով օգնել ենք նրան: Ես դեմ չեմ, որ փող տաք անձամբ ինչ-որ մեկին: Եթե դուք անձամբ ցանկանում եք օգնել որևէ աղքատ մարդու, դա ձեր գործն է: Բայց եկեղեցում մենք փող չենք բաժանում, այլ օգնում ենք սնունդով, հագուստով, օգնում ենք վճարել ուսման համար, սակայն, միևնույն ժամանակ, չենք ցանկանում, որ մարդիկ շարունակեն կախվածության մեջ մնալ ուրիշներից: Մենք ցանկանում ենք սովորեցնել հավատացյալներին ճիշտ ապրել: Բավական չէ պարզապես մթերք տալ. հարկավոր է սովորեցնել նրանց: Օգնելով մարդկանց սնունդով և հագուստով՝ մենք պետք է հարցնենք. «Ի՞նչ ես անում կյանքդ փոխելու համար»: Միայն նյութական օգնությունը բավական չէ, մենք պետք է հասցնենք մարդկանց ավելի բարձր մակարդակի:

«Ինչպե՞ս կարող եմ տասանորդ տալ, եթե չեմ աշխատում: Իմ ամուսինն աշխատում է, իսկ ես տնային տնտեսուհի եմ և աշխատավարձ չեմ ստանում»:

Դուք անհանգստանալու պատճառ չունեք: Եթե աշխատավարձ չեք ստանում, ապա ինչի՞ տասը տոկոսը կարող եք տալ: Բայց դուք կարող եք զոհաբերություններ տալ: Եթե ձեր ամուսինը փրկված է և տասանորդ է տալիս, ապա նրա տասանորդը ձերն է: Հիշե՛ք, որ դուք և ձեր ամուսինը մեկ մարմին եք:

«Իմ հարազատներն ապրում են մի քաղաքում, որտեղ միայն ուղղափառ եկեղեցի կա: Նրանց քաղաքում դա միակ եկեղեցին է: Նրանք փրկված են: Արդյո՞ք պետք է տասանորդ տան ուղղափառ եկեղեցում»:

Դուք կարող եք չհամաձայնել ինձ հետ, քանի որ հիմա կասեմ իմ կարծիքը: Կարծում եմ, որ դուք պետք է տասանորդ տաք այնտեղ, որտեղ երկրպագում եք Տիրոջը, և որտեղից Աստծո Խոսքն եք ստանում: Եթե ես ապրեի մի քաղաքում, որտեղ միայն ուղղափառ եկեղեցի կա, ես կգնայի այդ եկեղեցի և կխոսեի քահանայի հետ: Կփորձեի իմանալ, թե ինչպիսի մարդ է այդ քահանան, և արդյո՞ք նա փոխհարաբերություններ ունի Աստծո հետ: Չի կարելի ենթադրել, որ ինչ-որ եկեղեցում Աստված չկա՝ հիմնվելով միայն այն փաստի վրա, որ Աստծուն երկրպագելու ձևը տարբերվում է այն ձևից, որը կիրառում եք դուք:

Այցելելով շատ կաթոլիկ եկեղեցիներ՝ ես ուժգին Աստծո ներկայություն եմ զգացել: Մեկ անգամ մի ուղղափառ եկեղեցում էի, որտեղ զգացի Աստծո ներկայությունը. Աստված ամենուր է: Աստված այնտեղ է, որտեղ հավատք կա: Այդ իսկ պատճառով՝ եկեք շատ զգույշ լինենք և չքննադատենք այլ եկեղեցիները: Ես եղել եմ որոշ հոգեգալստական եկեղեցիներում, որտեղ ընդհանրապես Աստվածաշունչը չեն ուսումնասիրում, թեև մարդիկ խոսում են լեզուներով:

Մեկ անգամ, երբ Եկատերինբուրգում էի (վաղուց էի ցանկանում գնալ այնտեղ), այցելեցի այն տունը, որտեղ սպանվել էր Ռոմանովների ընտանիքը: Նրանց տանից ոչ հեռու մեծ ուղղափառ եկեղեցի կար, որտեղ թագավորական ընտանիքը երկրպագում էր Տիրոջը: Ժամանակին կոմունիստները փակել էին այդ եկեղեցին, բայց մոտավորապես չորս տարի առաջ՝ խորհրդային կարգի փլուզումից հետո, այդ եկեղեցին կրկին բացվեց, և

ես ցանկացա այցելել այդ պատմական վայրը:

Այդ ժամանակ իմ հաղորդումը հեռարձակվում էր Եկատերինբուրգի հեռուստատեսությամբ: Այդ պատճառով, երբ մի քահանա մոտեցավ ինձ, ես մտածեցի. «Նա հիմա կզայրանա, որ այստեղ եմ եկել: Եվ միգուցե մտածում է իմ մասին որպես հերթական արևմտյան քարոզչի»: Սակայն նա չգիտեր, թե ով էի ես: Միգուցե հեռուստացույց չէր դիտում: Այդ ուղղափառ քահանան պատմեց ինձ այն մասին, թե որքան անբարո մարդ էր մինչև Քրիստոսին ընդունելը, թե ինչպես նա ընդունեց Տիրոջը, ինչպես փրկագնվեց, և թե ինչպես Քրիստոսը մաքրեց նրան Իր արյունով: Նա խոսում էր Սուրբ Հոգու ներկայության մասին: Ես հարցրի, թե ինչպե՞ս է ծառայող դարձել: Նա ասաց, որ սկսել է ծառայել իր եկեղեցում որպես սարկավագ: Եվ քանի որ հավատարիմ է եղել, Աստված կանչել է՝ լինելու այդ եկեղեցու հովիվը: Այդ մարդը ճանաչում էր Աստծուն և գիտեր Աստծո Խոսքը: Նա անում էր այն, ինչ կարող էր, որպեսզի Աստծո Խոսքը հասցներ իր համայնքին: Գիտեք, ես ինքս էլ կարող էի հաճախել այդ եկեղեցի: Հովվից շատ բան է կախված:

Օրինակ, եթե ես ապրեի գյուղում, և այդ գյուղում լիներ միայն մեկ ավանդական եկեղեցի, որտեղ չքարոզվեր Աստծո Խոսքը, և որտեղ անկարելի լիներ ստանալ լավ ուսմունք և պատասխաններ կենսականորեն կարևոր հարցերին, ես նոր եկեղեցի կհիմնեի: Ինչպես հասկանում եք, դժվար է միանշանակ պատասխանել այս հարցին: Շատ բան է կախված մասնավոր հանգամանքներից:

«Ինչի՞ համար պետք է աղոթեմ, եթե տնօրենս ժամանակին չի տալիս իմ աշխատավարձը»:

Աղոթե՛ք, որ նա ապաշխարի: Միգուցե ֆինանսական խնդիրներ ունի. աղոթե՛ք, որ նա օրհնված լինի: Լա՛վ կատարեք ձեր աշխատանքը: Եթե դուք և ձեր աշխատակիցները լավ կատարեք ձեր աշխատանքը, ձեր ձեռնարկությունը կբարգավաճի:

«Կարդալով Հին կտակարանը՝ տեսնում ենք, որ Աբրահամը տասանորդ էր տալիս Աստծուն, և որ նա շատ հարուստ էր: Արդյո՞ք Աստված տասանորդի կարիք ունի աղքատ մարդկանցից, ովքեր տալիս են արցունքներով, այլ ոչ թե ուրախությամբ»:

Այո՛: Տասանորդ տալով՝ դուք չեք կորցնում, այլ ձեռք եք բերում: Դրանով իսկ հնարավորություն եք տալիս Աստծուն՝ օրհնել ձեզ: Եթե դուք լաց եք լինում, դա ընդամենը նշանակում է, որ դեռ չեք հասկացել, որ տասանորդն այն սերմն է, որը ցանում եք. ցանելով տասանորդի սերմը՝ դուք ապահովում եք ձեր ապագան:

Թագավորաց 3-րդ գրքի 17-րդ գլխում պատմվում է այն մասին, թե ինչպես Եղիան եկավ մի աղքատ այրու տուն, ով մի որդի ուներ: Նրանք խիստ չքավոր էին, և նրանց ուտելիքը բավական էր միայն ևս մեկ անգամ միասին ճաշելու համար: Սակայն նա ամբողջ ուտելիքը տվեց Աստծո մարդուն՝ Եղիային: Աստվածաշնչում գրված է, որ նա կերակրեց Աստծո մարդուն, և այդ օրվանից ալյուրը նրա սափորից չպակասեց: Աստված օրհնեց այդ կնոջը, ով առաջին հերթին պատվեց Իրեն:

Երբեմն մարդիկ կարծում են, որ ճիշտ չէ դրդել աղքատներին, որ փող տան: Բայց դա սխալ է: Անհրաժեշտ է ասել աղքատներին, որ նրանք տասանորդ տան, և ոչ այն պատճառով, որ եկեղեցուն փող է անհրաժեշտ: Այդ ամենից եկեղեցին ավելի հարուստ չի դառնա: Դա, նախ և առաջ, անհրաժեշտ է նրանց, որովհետև երբ նրանք սկսեն զոհաբերել Աստծուն և եկեղեցուն, նրանց կյանքում կգործի Աստծո բարգավաճման օրենքը:

Եթե դուք աղքատ եք, սկսեք տալ: Սկսե՛ք սերմ ցանել: Տասանորդ տվեք այն քչից, որ ունեք: Տվե՛ք, և կազատվեք աղքատությունից: Սա Աստծո օրենքն է: Աղքատ այրին չէր հասկանում սա, բայց նա բավականին խելամիտ էր՝ հնազանդվելու Աստծո մարդու ասածին: Ամեն ինչ չէ, որ պետք է հասկանանք: Աստված ասում է, որ Իր ճանապարհները բարձր են մեր ճանապարհներից, և Իր մտքերը բարձր են մեր մտքերից:

Ես մեծացել եմ Տալսա քաղաքում, որն Օկլահոմա նահանգում է: Այնտեղ ապրում էր Օրալ Ռոբերտսը: Իմ տատիկը նրա հարևանուհին էր և ճանաչում էր նրա ընտանիքին: Այն աղքատ հոգեգալստական ընտանիք էր: Նրանք պարզապես չքավոր էին: Նույնիսկ աղքատ մարդիկ կարեկցում էին նրանց: Տատիկս պատմում էր, որ նրանք այնքա՛ն աղքատ էին, որ Ռոբերտսների երեխաները միշտ բոբիկ էին: Մարդիկ անվանում էին նրանց «բութ աղքատ հոգեգալստականներ»:

Եվ ահա այն մարդը, ով այդքան աղքատ էր, հա-

մալսարան կառուցեց մեր քաղաքում: Իմ գրասենյակը Տալսայում է՝ այդ համալսարանի շենքերից մեկում: Այդ համալսարանի բոլոր շենքերը միասին արժեն ավելի քան 5 միլիարդ դոլար, իսկ այն շենքը, որտեղ մեր գրասենյակն է, մեկ միլիարդ դոլար է: Համալսարանի շենքն ունի 66 հարկ և մեծ դահլիճ՝ 15 հազար մարդկանց համար: Այդ համալսարանի վեց հազար ուսանողները խոսում են օտար լեզուներով: Բայց ամեն ինչ սկսվեց այն աղքատ մարդուց, ով հայտնություն ստացավ տալու մասին:

Երբ ես լինում եմ Միացյալ Նահանգներում, ամեն անգամ, երբ մոտենում եմ այդ 66 հարկանի շենքին, մտածում եմ. «Սա կառուցել է մի հնդկացի, ով «բութ և աղքատ հոգեգալստական» էր, ով ապրում էր Օկլահոմայի ամենաաղքատ շրջանում և հայտնություն ստացավ տալու մասին:

Եթե դուք ցանկանում եք հարուստ լինել և ձեր գործն օրհնված լինի, սկսեք զոհել ձեր գումարները Տիրոջը և կտեսնեք, թե ինչպես Աստված գերբնականորեն կօրհնի ձեր ֆինանսները: Սա Աստծո օրենքն է:

> «Ինչպե՞ս ճիշտ կերպով տասանորդ տալ՝ մինչև հարկերի գումարն առանձնացնե՞լը, թե՞ հարկերի գումարն առանձնացնելուց հետո»:

Մարդիկ տալիս են այս հարցը աշխարհով մեկ: Նրանց համար, ովքեր ապրում են նախկին Խորհրդային Միության երկրներում, հարկերը բավականին նոր հասկացություն են: Մարդիկ սովոր չեն հարկերին: Ամեն դեպ-

քում՝ նրանց վախեցնում է դրանց քանակը և ծավալը:

Ձեզնից ո՞վ հեռախոս ունի: Ի՞նչ է տեղի ունենում, երբ ժամանակին չեք վճարում հեռախոսի վարձը: Ի՞նչ է կատարվում, երբ ժամանակին չեք վճարում էլեկտրականության վարձը, այն անջատում են: Ձեր երկրում կան ոստիկանական, հրշեջ և շտապ օգնության ծառայություններ, դպրոցներ, հիվանդանոցներ, կառավարություն, բակապաններ: Ո՞վ է վճարում նրանց աշխատանքի համար. դուք՝ ձեր հարկերով: Ո՞վ է օգտվում շտապ օգնությունից՝ մենք: Ո՞ւմ համար են աշխատում ոստիկանությունը և հրշեջ ծառայությունը՝ մեզ համար: Սա նշանակում է, որ մեր հարկերը ծախսվում են մեզ համար: Եվ եթե մենք ապրում ենք այս երկրում, ապա պարտավոր ենք մարել այդ ծախսերը:

Երբեմն մարդիկ համաձայն չեն կառավարության հարկային քաղաքականությանը: Եթե դուք հարկեր չեք վճարում, ապա իրավունք չունեք օգտվել շտապ օգնությունից, ոստիկանությունից և հրշեջ ծառայությունից: Դուք իրավունք չունեք օգտվել ճանապարհներից: Փաստորեն՝ մեր հարկերն օգտակար և եկամտաբեր են մեզ համար: Այդ իսկ պատճառով, մենք պետք է վճարենք մեր եկամտի տասանորդը մեր վաստակածից:

Ինչ-որ մեկը հարցրեց ինձ. «Հովի՛վ, պաշտոնապես ես վաստակում եմ 35 հազար դոլար, բայց, իրականում, շատ ավելին եմ ստանում, և ոչ ոք չգիտի այդ մասին: Ես պետք է տասանորդ տամ այդ 35 հազարի՞ց, թե՞ ամբողջ եկամուտից»: Աստված գիտի, թե ինչ եկամուտ դու ունես:

Ես պարզեցի, որ հենց ֆինանսական ոլորտում է դրսևորվում՝ արդյո՞ք իրականում դու Քրիստոսի աշակերտն ես, որովհետև լուրջ քրիստոնյաները հնազանդ են Տիրոջը մշտապես և ամեն ինչում: Այն մարդը, ով չի ցանկանում քայլել Աստծո հետ մինչև վերջ, երբեք լիովին հնազանդ չի լինի Տիրոջը ֆինանսի հարցում:

Մատթեոսի Ավետարանի 22-րդ գլխում Հիսուսն ասաց. «Կայսրինը կայսրի՛ն տվեք»: 17-րդ գլխում Հիսուսը խոսում է այն մասին, որ պետք է վճարել հարկերը, և դա մեր աշխատավարձի որոշակի մասն է կազմում: Ինչ-որ մեկը կարող է ասել. «Ես չունեմ այդքան գումար, որ տամ և՛ Աստծուն, և՛ կառավարությանը»: Իսկ դուք ցանկանո՞ւմ եք հնազանդվել Աստծուն: Դուք հավատո՞ւմ եք, որ Աստված կօգնի ձեզ:

Մատթեոսի 17-րդ գլխում աշակերտները նույնպես խոսում էին այս մասին. «Մենք փող չունենք, որ անենք և՛ մեկը, և՛ մյուսը»: Հիսուսը պատասխանեց. «Արեք և՛ մեկը, և՛ մյուսը. կայսրինը տվեք կայսրի՛ն, իսկ Աստծունը՝ Աստծո՛ւն»: Մատթեոսի Ավետարանի 17-րդ գլխում Հիսուսն ասաց Իր աշակերտներից մեկին. «Դու ասում ես, որ բավականին գումար չունե՞ս հարկերը վճարելու համար»: Դրանից հետո Նա ուղարկեց նրան ձուկ բռնելու. «Գնա՛ և ձո՛ւկ բռնիր, բացի՛ր այդ ձկան բերանը և ոսկե մետաղադրամ կգտնես: Այդպես դու փող կունենաս հարկերը վճարելու համար»: Սա նշանակում է, որ եթե դուք որոշում կայացնեք ճիշտ վարվել ձեր տրամադրության տակ եղած ֆինանսի հետ, Աստված կտա անհրաժեշտ գումարը, նույնիսկ եթե դրա համար Նա ստիպված լինի ուղարկել ձեզ գետը, որ այնպիսի

ձուկ բռնեք, որի բերանում մետաղադրամ կա:

Ցավոք, մարդն իր էությամբ դժվարանում է ճիշտ վարվել փողի հետ: Նա ցանկանում է ծախսել ամբողջն իր համար, կամ այնպես, ինչպես ինքն է ճիշտ համարում: Անհրաժեշտ է դաստիարակել մեր բնավորությունը:

«Պե՞տք է արդյոք տասանորդ տալ պարտքով վերցրած գումարից»:

Իհարկե՝ ո՛չ: Այդ գումարը ձեր եկամուտը չէ, այլ՝ պարտքը: Այդ գումարը չի պատկանում ձեզ: Դուք պետք է վերադարձնեք դա այն մարդուն, ով պարտքով տվել է ձեզ: Եթե օգտագործեք պարտքով վերցրած գումարն աղքատին տալու համար կամ եկեղեցու շենքի շինարարության համար, ապա դուք պարզապես գողանում եք այն մարդուց, ով տվել է այն ձեզ: Դուք չպետք է տասանորդ տաք պարտքով վերցրած գումարից:

Վերջում ցանկանում եմ ասել, որ էականը վստահությունն է Աստծո հանդեպ: Եթե Աստված պատվիրում է ձեզ բերել տասանորդն ու զոհաբերությունն Աստծո տուն, ապա դուք պետք է վստահեք և հնազանդ լինեք Նրան: Հնազանդությունը մշտապես վարձատրվում է Աստծո կողմից:

Միգուցե, կարդալով այս գրքույկը, զգաք, որ ձեր սրտում նախկինի պես թաքնվում են տալու վերաբերյալ վախը, անվստահությունը և կասկածները: Ահա՛ իմ խորհուրդը. խորամո՛ւխ եղեք Սուրբ գրքի մեջ, քանի որ միայն Աստծո Խոսքը, այսինքն՝ Աստծո Խոսքի

ճշմարտությունը կարող է փոխել ձեր սիրտը:

Առաջարկում եմ որոշ աստվածաշնչյան հատվածներ, որոնց շուրջ մտորելով՝ կկարողանաք վստահություն ձեռք բերել Աստծո հանդեպ և բացել Աստծո օրհնության դռները ձեր կյանքում:

Ղևտացիների 27.30

«Եվ երկրի ամբողջ տասանորդը՝ երկրի հունտերից և ծառերի պտղից, Տիրոջինն է. այն սուրբ է Տիրոջ համար»:

Ղուկաս 6.38

«Տվե՛ք, և կտրվի ձեզ. լավ չափով, թափ տրված, շարժված, լիփ-լիքը կտան ձեր գոգը, որովհետև այն չափով, ոչ չափեք, նրանով կչափվի ձեզ»:

Գ Հովհաննես 2

«Սիրելի՛, աղոթք եմ անում, որ ամեն բանի մեջ հաջող և առողջ լինես, ինչպես քո հոգին հաջող է»:

Ա Տիմոթեոս 6.17

«Ներկա աշխարհի հարուստներին պատվիրի՛ր, որ չգոռոզանան, և ո՛չ էլ ունայն մեծության վրա հույս դնեն, այլ՝ կենդանի Աստծո վրա, որ ամեն բան տալիս է մեզ առատապես վայելելու համար»:

Փիլիպեցիների 4.12,13

«Գիտեմ պակասություն քաշել և ավելությունով լինելն էլ: Ամեն բանի մեջ ամենին լավ տեղեկացած եմ. կշտանալն էլ, սովելն էլ, ավելությունով ունենալն էլ, պակասություն

քաշելն էլ: Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Հիսուս Քրիստոսով»:

Երկրորդ Օրինաց 8.18

«Այլ հիշի՛ր քո Տեր Աստծուն, որովհետև Նա է հարստություն ստանալու համար քեզ ուժ տվողը, որ քո հայրերի հետ Իր երդումով արած ուխտը հաստատի, ինչպես որ այսօր»:

Հովհաննես 10.10

«Գողը չի գալիս, բայց միայն որ գողանա և սպանի և կորցնի. Ես եկա, որ կյանք ունենան, և է՛լ ավելի ունենան»:

Սաղմոս 1.1-3

«Երանելի է այն մարդը, որ ամբարիշտների խորհրդի մեջ չի գնում և մեղավորների ճանապարհի մեջ չի կանգնում և ծաղր անողների աթոռի վրա չի նստում, այլ՝ նրա կամքը Տիրոջ օրենքի մեջ է և ցերեկ ու գիշեր Նրա օրենքի վրա է մտածում»:

Ղուկաս 12.15

«Եվ նրանց ասաց. «Տեսե՛ք և զգո՛ւյշ կացեք ագահությունից, որ մարդու ստացվածքի առավելությունից չէ նրա կյանքը»»:

Բ Կորնթացիների 9.7

«Ամեն մեկն, ինչպես որ սրտի հոժարություն կա, ոչ թե տրտմությունով կամ հարկադրությունով, որովհետև Աստված սիրում է ուրախ տվողին»:

Սաղմոս 16.2,5

«Ասացի Տիրոջը, թե Դու ես իմ Տերը. բարիք չունեմ Քեզ-նից բացի: Տե՛րն է իմ ժառանգության և իմ բաժակի բա-ժինը. Դու հաստատ պահում ես իմ ժառանգությունը»:

Սաղմոս 23

«Տե՛րն է իմ հովիվը, և կարոտություն չեմ ունենա: Նա կանաչ տեղերում հանգստացնում է ինձ և հանդարտ ջրերի մոտ տանում է ինձ: Իմ անձին հանգիստ է տա-լիս, ինձ առաջնորդում է արդարության շավիղներում Իր անվան համար: Թեև գնամ մահվան շուքի ձորով, չար բանից չեմ վախենա, որովհետև Դու ինձ հետ ես. Քո գավազանն ու ցուպը մխիթարում են ինձ: Դու իմ առջև սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց: Դու իմ գլուխն օծում ես յուղով. իմ բաժակը խիստ լիքն է: Հենց բարիք և ողորմություն կգան իմ ետևից իմ կյանքի բոլոր օրերում, և Տիրոջ տանը կբնակվեմ շա՛տ երկար ժամանակ»:

Սաղմոս 25.12,13

«Ո՞վ է այն մարդը, որ վախենում է Տիրոջից. ահա կսո-վորեցնի նրան այն ճանապարհը, որ ընտրել է: Նրա ան-ձը բարության մեջ կբնակվի, և նրա սերունդը երկիրը կժառանգի»:

Սաղմոս 37.16-18, 25

«Արդարի քիչ բանը լավ է, քան թե շատ ամբարիշտնե-րի ճոխությունը, որովհետև ամբարիշտների բազուկները կփշրվեն, իսկ արդարներին հաստատում է Տերը: Տերը ճանաչում է արդարների օրերը, և նրանց ժառանգությու-նը հավիտյան կլինի: Ես երեխա էի և ծերացա և չտեսա

արդարին երեսից թողված, և ո՛չ էլ նրա զավակին, որ հաց մուրա»:

Սաղմոս 55.22

«Քո հոգսն Աստծո վրա գցի՛ր, և Նա խնամք կանի քեզ համար. Նա չի թողնի, որ արդարը հավիտյան շարժվի տեղից»:

Առակաց 3.27

«Բարությունը մի՛ խնայիր, որին որ կվայելի, երբ որ ձեռքումդ զորություն կա անելու»:

Առակաց11.24,25

«Կա որ ցրվում է և է՛լ է ավելանում, բայց չափից դուրս խնայողը կա, սակայն կարոտության է հասնում: Օրհնություն տվող անձը կգիրանա, և ոռոգողն ի՛նքն էլ կոռոգվի»:

Առակաց 24.3,4

«Տունը կշինվի իմաստությունով և հանճարով կհաստատվի: Գիտությունով կլցվեն շտեմարանները, և կստացվեն ամեն պատվական ստացվածք և վայելչություններ»:

Առակաց 30.8,9

«Ունայն և սուտ խոսքը հեռացրո՛ւ ինձնից, աղքատություն կամ հարստություն ինձ մի՛ տուր, ինձ համար որոշված հացով կերակրի՛ր ինձ: Չլինի, որ կշտանամ և Քեզ ուրանամ և ասեմ. «Ո՞վ է Տերը», և չլինի, որ չքավորանամ և գոռոզանամ և զուր հիշեմ իմ Աստծո անունը»:

Ժողովող 5.10

«Արծաթ սիրողն արծաթից չի կշտանա, և ո՛չ էլ հարստություն սիրողը՝ եկամուտից. սա էլ է ունայն»:

Եսայի 59.1

«Ահա Տիրոջ ձեռքը չի կարճացել փրկելուց, և Նրա ականջը չի ծանրացել լսելուց»:

Եսայի 64.4

«Եվ հավիտենից ի վեր լսված չէ և ականջին հասած չէ, աչք էլ չի տեսել, որ Քեզնից բացի մեկ ուրիշ աստված այսպիսի բաներ աներ իրեն հուսացողներին»:

Երեմիա 2.13

«Որովհետև Իմ ժողովուրդը կրկնապատիկ չարություն գործեց. Ինձ՝ կենաց ջրի աղբյուրիս թողեցին, որ իրենց համար հորեր փորեն՝ ծակծակոտ հորեր, որոնք չեն կարող ջուրը պահել»:

Երեմիա 17.5-8

«Այսպես է ասում Տերը. «Անիծյա՛լ լինի այն մարդը, որ մարդուն է ապավինում և մարմինն իրեն բազուկ է շինում և իր սրտով խոտորում Տիրոջից: Նա մոշենու պես պիտի լինի անապատում և պիտի բարիքը եկած ժամանակ չտեսնի և պիտի բնակվի անապատի այրված տեղերում, աղի և անբնակ երկրում: Օրհնյա՛լ լինի այն մարդը, որ Տիրոջն է ապավինում, և Տերն է նրա հույսը: Նա նման կլինի մի ծառի, որ տնկված է ջրերի մոտ. նա իր արմատները կձգի գետի մոտով և չի տեսնի տաքությունը եկած ժամանակ, այլ նրա տերևները կանաչ կլինեն, և երաշտ տարում նա չի վախենա և չի դադարի պտուղ տալուց»»:

Երեմիա 29.11,12

«Որովհետև Ես գիտեմ այն խորհուրդները, որ Ես խորհում եմ ձեր մասին,- ասում է Տերը,- խաղաղության խորհուրդները, և ոչ թե չարության, որ ձեզ տամ ապագան և հույսը»:

Հովել 2.21-26

«Մի՛ վախեցիր, ո՛վ երկիր, ցնծա՛ և ուրախացի՛ր, որ Տերը մեծ բաներ է անում: Մի՛ վախեցեք, ո՛վ դաշտի անասուններ, որ կանաչելու են անապատի արոտները, որովհետև ծառը տալու է իր պտուղը, թզենին և որթը պիտի տան իրենց զորությունը: Եվ ո՛վ Սիոնի որդիներ, ցնծացե՛ք և ուրախացե՛ք Տիրոջով՝ ձեր Աստծով, որ կտա ձեզ ուսուցիչ արդարության համար և ձեզ համար անձրև կիջեցնի՝ առաջին և վերջին անձրևը, առաջվա պես: Եվ կալերը կլցվեն ցորենով, և հնձանները կհորդեն գինով և յուղով: Եվ Ես կհատուցեմ ձեզ այն տարիները, որ կերան մորեխը, ջորյակը, երկիլը և խառնիճը, այն Իմ մեծ զորքը, որ ուղարկեցի ձեր մեջ: Եվ պիտի ուտեք և ուտեք ու կշտանաք և օրհնաբանեք ձեր Տեր Աստծո անունը, որ ձեզ համար հրաշքներ արեց, և Իմ ժողովուրդը պիտի չամաչի հավիտյան»:

Մատթեոս 6.31-33

«Ուրեմն հոգս մի՛ արեք՝ ասելով, թե ինչ պիտի ուտենք, կամ ինչ պիտի խմենք, կամ ինչ պիտի հագնենք, որովհետև այդ ամենը հեթանոսներն են խնդրում, որովհետև ձեր երկնավոր Հայրը գիտի, որ այդ ամենը պետք է ձեզ: Սակայն առաջ Աստծո արքայությունը և Նրա արդարությունը խնդրեք, և այդ ամենը կտրվի ձեզ»:

Մատթեոս 13.22

«Եվ փշերի մեջ սերմածը նա է, որ Խոսքը լսում է, և այս աշխարհի հոգսերը և հարստության խաբեբայությունը խեղդում են այն Խոսքը, և անպտուղ է լինում»:

Մարկոս 4.18,19

«Եվ փշերի մեջ սերմվածները նրանք են, որ Խոսքը լսում են, բայց աշխարհի հոգսերը և հարստության խաբեությունը և ուրիշ բաների ցանկությունները մտնում են, Խոսքը խեղդում, և անպտուղ է լինում»:

Ղուկաս 12.22-34

«Իր աշակերտներին էլ ասաց. «Դրա համար ասում եմ ձեզ՝ հոգս մի՛ արեք ձեր կյանքի համար, թե ինչ պիտի ուտեք, ո՛չ էլ մարմնի համար, թե ինչ պիտի հագնեք: Հոգին ավելի է կերակուրից, և մարմինը՝ հագուստից: Մտիկ արեք ագռավներին, որ ո՛չ սերմում են, և ո՛չ հնձում են, որոնք ո՛չ շտեմարաններ ունեն, և ո՛չ ամբարներ, և Աստված կերակրում է նրանց. դուք որքա՞ն ավելի արժեք ունեք թռչուններից: Ձեզնից ո՞վ կարող է հոգս անելով իր հասակի վրա մի կանգուն ավելացնել: Արդ եթե ամենափոքր բանի համար չեք կարող, ինչո՞ւ եք ուրիշ բաների համար հոգս անում: Մտիկ արեք շուշաններին՝ ինչպես են մեծանում. ո՛չ ջանք են անում, և ո՛չ մանում, բայց ասում եմ ձեզ՝ Սողոմոնն էլ իր ամբողջ փառքի մեջ նրանցից մեկի նման չհագավ: Իսկ եթե հանդի խոտը, որ այսօր կա և վաղը փռան մեջ է գցվում, Աստված այնպես է հագցնում, որքա՞ն առավել ևս ձեզ, թերահավատնե՛ր: Եվ դուք մի՛ որոնեք, թե ինչ ուտեք կամ ինչ խմեք,

և մի՛ գրգռվեք, որովհետև այդ բոլոր բաներն աշխարհի հեթանոսներն են որոնում, բայց ձեր Հայրը գիտի, որ դրանք ձեզ պետք են: Սակայն Աստծո արքայությունը խնդրե՛ք, և այդ բոլորը կավելանան ձեզ: Մի՛ վախեցիր, փոքր հոտ, որովհետև ձեր Հայրը հաճեց, որ Արքայությունը տա ձեզ: Ձեր ստացվածքը ծախե՛ք և ողորմություն տվե՛ք. ձեզ համար չհնացող քսակներ շինեք՝ անպակաս գանձ Երկնքում, որտեղ գողը չի մոտենում, և ո՛չ էլ ցեցն է ապականում, որովհետև, որտեղ որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սրտերը կլինեն»:

Բ Կորնթացիների 8.9

«Որովհետև գիտեք մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը, որ ձեզ համար աղքատացավ Նա, որ հարուստ էր, որ դուք Նրա աղքատությունով հարստանաք»:

Փիլիպեցիների 4.6

«Ոչինչ հոգս մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով և աղաչանքով և գոհությունով ձեր խնդրվածքները թող հայտնի լինեն Աստծուն»:

Ա Տիմոթեոս 6.6-10

«Բայց մեծ շահավաճառություն է, իրավ, աստվածապաշտությունը բավականության հետ միասին, որովհետև ոչինչ չենք բերել աշխարհ, և հայտնի է, որ ոչինչ էլ չենք կարող դուրս տանել: Բայց եթե կերակուր և հագուստ ունենք, նրանցով բավականանանք: Իսկ նրանք, որ կամենում են հարստանալ, փորձության և որոգայթի և շատ անմիտ վնասակար ցանկությունների մեջ են ընկնում, որ ընկղմում են մարդկանց սատակման և

կորստի մեջ: Որովհետև արծաթասիրությունը բոլոր չարիքների արմատն է, որին մի քանիսը անձնատուր լինելով՝ հավատքից մոլորվեցին, և իրենց անձերը շատ ցավերով խոցեցին»:

Եթե համոզված չեք, որ մահվանից հետո ձեզ սպասում է Երկինքը, դուք պետք է աղոթեք մեղքերի ներման համար, և որ Հիսուս Քրիստոսը դառնա ձեր անձնական Փրկիչը և Տերը: Աստված չի ցանկանում, որ դուք կամ ինչ-որ մեկն անցկացնի հավիտենությունը դժոխքում: Սուրբ գիրքն ասում է. «Այսո՛ր է փրկության օրը»: Եթե ցանկանում եք ընդունել փրկությունը, կրկնե՛ք այս աղոթքի խոսքերը.

«Հա՛յր Աստված, ես աղոթում եմ Հիսուսի անունով: Ես գիտեմ, որ մեղավոր եմ, և որ իմ ուժերով չեմ կարող փոխել ո՛չ ինձ, ո՛չ էլ ինձ շրջապատող կյանքը: Ես Քո ներման և օգնության կարիքն ունեմ: Հիսուսի անունով խնդրո՛ւմ եմ՝ ների՛ր իմ մեղքերը: Հավատում եմ, որ Հիսուսն Աստծո Որդին է, որ Նա իմ մեղքերն ու հիվանդությունները Գողգոթայի խաչը բարձրացրեց, և ես ընդունում եմ Նրա զոհը: Մաքրի՛ր ինձ: Փոխի՛ր ինձ: Իմ կյանքը Քեզ եմ հանձնում և խնդրում եմ, որ այսուհետև Դո՛ւ առաջնորդես ինձ: Ես ցանկանում եմ հաճեցնել Քեզ ամեն ինչում: Շնորհակա՛լ եմ Քեզ Հիսուսի համար, նաև հավիտենական կյանքի համար, որ շնորհեցիր ինձ: Ամե՛ն»:

Եթե դուք հենց նոր կրկնեցիք այս աղոթքը, ես շնորհավորում եմ ձեզ. դուք դարձաք Աստծո զավակ և

Հիսուս Քրիստոսի եկեղեցու անդամը: Աստվածաշունչն ասում է. *«Ուրեմն, եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ» (Բ Կորնթացիների 5.17):* Այս խոսքերը վերաբերում են ձեզ: